

ԵՂԻԱ ՏԷՄԻՐԱՌՈՒԵԱՆ

Դ Ա Ր

ՀԱՆԱՔԱԾՈՅ

Ազգային, Գրական ու Գիտական

ՀԱՏՈՒԱԾՈՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԳԵՐՈՒԹԵԱՆ




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

(Արամեան)

1889

«عارف عمومیہ نظارت جلیہ سنک» رخصتیلہ طبع اولہ شد



ԵՂԻԱ ՏԷՄԻՐԱՊԱՇԵԱՆ

Դ Ա Ր

ՀԱՆԱՔԱԾՈՅ

Ազգային, Գրական ու Գիտական

ՀԱՏՈՒԹՅՈՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՆՏԱՏԵԱՆ

(Արամեան)

1889

UNIVERSITY OF CHICAGO

THE

LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO

CHICAGO, ILL.



RECEIVED

(Stamp)

1880

Դ Ա Ր

Ազգային, Գրական ու Գիտական

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Երեք որոշմունք, զորս առած է վարչութիւնն, հաւասարապէս օգտակար են ազգային բարօրութեան եւ կը ծանուցանեն բարեկարգութեան սկզբնաւորութիւնն՝ Աշրգեան Խորէն Պատրիարքին օրով: Այս որոշմունք երեքն ալ կրօնական հանգամանք ունին. այլ իրենց գործադրութիւնն հաւասարապէս բարւոքում յառաջ պիտի բերէ Հայ Ժողովրդեան, տնտեսական ու բարոյական վիճակին մէջ: Ազգային վարչութեան որոշմունքն են՝

Ա. Ընծայարան մը հիմնել:

Բ. Զընդունել գաւառաց առաջնորդութեան կոչուող եկեղեցականաց հրաժարականն:

Գ. Արգելուլ որ ննջեցելոց դագաղներու վրայ պսակներ դրուին:

ԸՆԾԱՅԱՐԱՆ

Աշխարհական գրիչներու մէջէն՝ Ընծայարանի կառելուութեան վրայ ամենէն աւելի խօսած ըլլալով, յանչափս կը բերկրինք անտարակոյս, տեսնելով թէ՛ Տ. Խորէն Պատրիարք իր գահակալութեան առաջին օրէն կը

զբաղի կղերանոցի մը հաստատութեան խնդրով եւ գործնական գետնի մը վրայ կը փոխադրէ սոյն կենսական խնդիրն: Այլ ևս ներելի չէ երկբայիլ Շահնազարեանի յղացած մեծ խորհրդոյն իրագործման: Մէկէն աւելի պատճառներ զմեզ կապահովեն այս նկատմամբ: Երկու մեծագոյն պատճառք են Արմաշու նախկին վանահօր Կոստանդնուպօլսոյ Պատրիարքական գահուն վրայ ներկայութիւնն և Գարակէօմրիկի նման ուխտատեղւոյ մը հասութից յատկացումն Ընծայարանին: Գործոյն յաջողութիւնն ոչ նուազ կ'երաշխաւորի Գեր. Օրմանեան եւ պիսկոպոսին ընտրութեամբն իբրեւ քարոզիչ այդ ուխտատեղւոյն, և ընտրութեամբ Յանձնաժողովոյն՝ ուսմբնականաբար պիտի նախագահէ Հայոց նախկին առաջնորդն և ոյր անդամք կը փայլին որքան եկեղեցասիրութեամբ նոյնքան մեծանձնութեամբ⁽¹⁾: Յանձնաժողովոյն անդամոց վրայ մենք պիտ' առաջարկէինք յաւելլուլ պատուական անձ մը, ազգային ծանօթ բարերար մը, Յովհաննէս Յակոբեան էֆէնտին, որ ընդ երկար կենակցած է Շահնազարեան վարդապետին հետ, եւ ըմբռնած՝ թերեւս աւելի քան ոչ ոք աշխարհականաց մէջէն՝ ժառանգաւորաց վարժարանի մը կարեւորութիւնն: Օրմանեան Սրբազան, թէեւ Շահնազարեանի հետ անձուկ նմանութիւն մը չունենայ, սակայն իբրեւ Աստուածաբանութեան վկայեալ վարդապետ՝ որ յայդմ փորձառութիւն ալ ստացաւ Գէորգեան ճեմարանին մէջ իր դասախօսութեամբ եւ որ այսօր Կրօնագիտութեան ուսուցիչ է Կեդրոնական վարժարանին մէջ, Օրմանեան Սրբազան՝ Մուքատեանց Արքեպիսկոպոսին հետ՝ յար-

(1) Վսեմ. Արիկ Ունճեան էֆէնտին մասնաւորապէս այսպիսի հաստատութեան մը համար կարեւոր գումար մը խօսւցացած էր ժամանակաւ:

մարագոյն կամ ձեռնհասագոյն անձն է կրօնական կըրթարանի մը վարչութեանն համար ⁽¹⁾ :

Ընծայարանի մը հաստատման դէմ այլ և այլ արգելքներ կային : Բարոյական արգելանաց մին՝ ոմանց այսպիսի հաստատութեան մը նկատմամբ կանխակալ կարծիքն էր. կարծիք, որ անտարակոյս կը տիրէ ցարդ, և որուն դէմ հարկ է մաքառիլ յաւէտ : Կը կարծեն, կոտ կ'երկնչին ոմանք : Թէ կրօնական ուսմանց յատկացեալ հաստատութեան մը մէջ դաստիարակուած անհատք՝ կղերանոցէն արտաքոյ՝ ձգտին Հայ ընկերութեան ծոցոյն մէջ առանձին դաս մը, անշատ մարմին մը կազմել : Այդ անձանց համար, այսպիսի դասի մը կազմութիւնն երբեք անպատեհութիւն չը պիտ' ունենար, եթէ Հայ ազգին կրօնական թէ՛ քաղաքային վարչութեան գլուխ եկեղեցականք չը գտնուէին :

Այդ կարծիքն՝ ըստ մեզ՝ տարապարտ և այդ երկիւն անտեղի է : Երկոցս իրաւունք ունինք վճռելու թէ հաստատուն եկեղեցական ուսում ստացած կղերի մը գոյութիւնն Հայ ընկերութեան մէջ խանգարումն, Հայաստանեայց եկեղեցւոյ նկարագրին բռնաբարումն յառաջ չպիտի բերէ : Իրաւունք ունինք այսպէս մտածելու. նախ, զի մեր եկեղեցւոյն Սահմանադրութիւնը, մեր ընկերութեան կազմութիւնը չեն ներեր, չեն հանդուրժեր զատ դաս, զատ մարմին : Երբ մեր հին մատենագիրք կը գրեն «գառք քահանայից», երբ Փարպեցին կ'ըսէ

(1) Հայ կղերին մէջ կայ ոմն, եկեղեցական դասուն կրօնագոյն անդամն, որ նոյնքան ծնունդասութիւն և մանաւանդ յարմարութիւն ունի սոյն բարձր պաշտօնին : Տաքաղաղաբար կամ բարեբաղաղաբար հեռու կը գտնուի մայրաքաղաքէս. ի Պարսիզակ կ'ուսուցանէ եւ կ'ուսանի. կ'ուսուցանէ զոր ինչ մեր եկեղեցականներէն շատեր չը գիտն զեռ. կ'ուսանի զոր ինչ յոյժ սակաւք մեր եկեղեցականաց մէջէն կ'ուսանին միանգամայն :

«Յառաքելական դասուէն քակտեցաւ», բառական նշանակութեամբ միայն կառնումը դարձնելով, եկեղեցին, իր հաստատութեան առաջին օրերուն մէջ, խտիր չէ դրած կրօնի պաշտօնէից ու հաւատացելոց միջև։ Քրիստոնէութիւնն որոշած չէ զատ դաս, զատ մարմին։ Ընտրութեան ու համարատուութեան իրաւունք ունի ժողովուրդն եկեղեցական գործոց մէջ ալ։ Այդ իրաւունք՝ մանաւանդ առ մեզ՝ յոյժ բացայայտ, բացորոշ են։ Յայսօր ոչ ոք՝ Հայ կղերին անդամներէն՝ մտաբերած է բողոք բառնալ այդ իրաւանց դէմ։ Եկեղեցական մը չէ մտաբերած՝ եկեղեցւոյ պաշտօնէից ընտրութեան իրաւունքն՝ եկեղեցականաց սեփականել և ժխտել համարատուութեան պարտականութիւնն։ Ի՞նչ պատճառ ունինք խորհելու թէ Հայ կղերն, երբ զօրանայ մտօք, երբ ի շնորհս եկեղեցական կատարեալ դաստիարակութեան մ'որ եւս առաւել թափանցել պիտի տայ նմա քրիստոնէութեան ոգին, ի՞նչ պատճառ ունինք խորհելու թէ Հայ կղերն՝ երբ աւելի լաւ ուսումնասիրէ Շնորհալին և Շնորհալոյն հետ այն վեհ աշխարհական հեղինակներն ալ եւրոպական ոյք զմարդիկ հաւասար կը հռչակեն առաջի Աստուծոյ և կ'յորդորեն Արեւմտեան եկեղեցիներն՝ Աւետարանական սկզբանց վերադառնալ։ Ի՞նչ պատճառ ունինք խորհելու, կ'ըսեմ, թէ Հայ կղերն՝ երբ Հայաստանեայց եկեղեցւոյ հիանալի նկարագիրն եւս աւելի գնահատելու յարմար դաստիարակութիւն մ'ընդունի, պիտի հակամիտի բռնաբարել այդ նկարագիրն։

Միւս կողմանէ, երբ կղերն աւելի լուսաւորուի, ի՞նչ պատճառ ունինք խորհելու թէ աշխարհականք գիրք ու գրիչ այլ եւս վառարանը պիտի նետեն։ Այլևայլ արհեստից մէջ պահանջուած ծանօթութեանց քանակու-

Թիւնն՝ որ օրըստօրէ կ'աւելնայ, մրցումը՝ զոր Հայք պիտի կատարեն բնիկ և մանաւանդ արեւմտեան արհեստական կազմաւորեալ ու զարգացեալ զօրութեանց հետ, մրցումը մանաւանդ՝ զոր աշխարհականաց մէջ պիտի գրգռէ կղերին զարգացումն, պիտի թուլացնեն ու յետադիմութեան պիտի դատապարտեն միթէ Հայ ժողովուրդն։ Եւ քանի որ Հայ ժողովուրդն՝ եկեղեցականաց զարգացման համեմատութեամբ չը պիտ' անզարգանայ, քանի որ իր բարոյական կարողութեանց մշակմամբն իսկ պիտի բերուի իւր իրաւանց վրայ կատարելագոյն ծանօթութիւն մը ստանալ և այդ իրաւանց պաշտպանութեան համար աւելի նախանձայուզութիւն ու միանգամայն զօրութիւն ունենալ, մարդս ախտային երկիւղիւ մը համակուած ըլլալու է, մարդս ջլախտաւոր մը, սեւամաղձոտ մ' ըլլալու է՝ որպէսզի Հայ եկեղեցականաց լուսաւորութենէն Հայ ժողովրդեան խաւարումն հետեցնէ։ Ո՛չ, երկիւղ չը կայ թէ կղերանոցներու հաստատմամբ, Հայ կղերին իմացական մակարդակին բարձրացմամբ, պիտի խանգարի հաւասարակշռութիւնն որ կը տիրէ Հայ ընկերութեան մէջ, Հայ ժողովրդեան և Հայաստանեայց եկեղեցւոյն միջև։ Հաւասարակշռութեան հիմունք՝ ընդհակառակն՝ աւելի պիտի դրականանան, աւելի հաստատուին։

Եւ արդարեւ, ժողովուրդն երբ տեսնէ թէ կղերն իւր պաշտօնին ըստ ամենայնի բարձրութիւնն ունի, երբ տեսնէ կղերն ուսեալ, անձնուէր, համեստ, իր հմտութեամբ, իր պերճախօսութեամբ, իր գործունէութեամբ, իր վարուք՝ կարօզ հովուելու Քրիստոսի հօտն, յայնժամ ո՛չ ապաքէն աւելի ներդաշնակութիւն պիտի գոյանայ հօտին ու հովուին միջեւ։ Խնամութեան (affinité) օ-

րէնքն որ կը վարէ նիւթն, նորագ ազդեցութիւն դռնի միւթէ բարոյական կարգին մէջ. բնաւունթիւն ու բանականութիւն, բնական ու բարոյական գիտութիւնք՝ մեկնոյն շղթային օղակները չեն միմեծ, ժողովարդի, այո՛, աւելի պիտի ներէ, աւելի պիտի մեծարէ իր կղերքն, երբ սա իր տնտեսներն իրեն արժանիք չը համարէ վիպն, այլ իր արժանիքը պահպանէ իր տնտեսներն, ոչք պղծտին համար և եթ ունին հմայք, եթ սոյն ներգայնականութեան վրայ տարակոյս ունիք դեռ, կունանք զմեզ մոռնին, ներկայէն կունանք դատել ապագայն. ոչ ապաքէն եկեղեցական մ'իւր արժանեաց համեմատութեամբ կը յարգենք դե կը սիրենք այսօր, Տգէտ քաւառացի մը խրկման հայրիկի քղանցքը կը համարուէ և Սերվիլէն էֆէնտին կը համարուէ նորին Սրբազնութեան աջն. ապենէն տգէտէն սկսեալ ամենէն գիտունն՝ ուրեմն կը յարգեն ու կը սիրեն աչսօր արժանաւոր եկեղեցականն, է՛ր ապագային մէջ տարբեր պիտի լինէր. և՛ հաւասար պայմաններով այդ սէրն ու այդ յարգանքն է՛ր փոխադարձ չը պիտի լինէին:

Արդ, թէ մեր եկեղեցւոյն և ընկերութեան սահմանադրութիւնն, օրէնք ընկերաբանականք և թէ բնականք, կը հաւաստեն զմեզ թէ՛ չայ եկեղեցականաց լուսաւորութիւնն աղիտաբեր չը պիտի՝ ըլլայ սոյն եկեղեցւոյն և սոյն ընկերութեան համար, Յեղային հանգամանքներ, ոչք յանցելումն մերկղերն ազգային պահպանութեան ախոյեան հանդիսացուցած են և ոչք պիտի չեչդուին անցելոյն ընդարձակ ծանօթութեամբ. մեջավայրն նիւթական ու բարոյական, ուր պիտի դատարարակուին ժառանգարորք, և ուր մեր եկեղեցւոյն նկարագրին համապատասխան իմաստասիրականք.

սկզբունք օրըստօրէ կ'արմատանան, միցումն, որ եկեղեցականաց ստացած հմտութենէն պիտի յառաջածագի ազգային եկեղեցական ուսումնասիրութեանց մասին. սոքա թոյլ չեն տար մեզ յոռետես ըլլալ ընծայարանէ դուրս եկող Հայ կղերին ոգւոյն ու գործունէութեան նկատմամբ:

Ուստի կըցանկանք Պարակէօմիւկի Յանձնաժողովոյն խորհրդակցութեանց վաղընդփոյթ մարմնացման. և պատրաստ ենք նուիրել այդ մեծ գործին համար մեզ խոնարհ աջակցութիւնը, զոր պատիւ ըրաւ խնդրել ի մէջ Յանձնաժողովոյ նախագահ Գեղ. Մալաքիա եպիսկոպոս Օրմանեան:

ԱՌԱՋ ՈՐԴ

Ազգային Վարչութեան միւս սրտումն առաջնորդաց կը պատկանի:

Ազադակներ, իրարու հակասական, մայրաքաղաքէս ու գաւառներէն կը բարձրանան. «Եկեղեցական շատ ունինք» կ'ազադակեն Պօլսեցիք. «Առաջնորդ չունինք» կ'ազադակեն կամ կը բողոքեն գաւառացիք: Սքազան Պատրիարք Հայրն ուխտ ըրած է որ՝ այս ներհակ ճայնից, այս անհանդուրժելի վիճակին վախճան տայ: Իւր գահակալութեան ճառին մէջ ընդարձակօրէն խօսեցաւ այս նիւթոյն վրայ. և ահա ձեռն ի գործ կ'արկանէ: Վարչութիւնն սկսաւ գործի՝ մերժելով Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոսի հրաժարականն: Հմայեակ եպիսկոպոսի հրաժարականաց վրայ քանի մը տարիներէ ի վեր այնքան կը խօսուի ուրբան կը խօսուէր երբեմն Բունաստանի նախարարութեան հրաժարականաց վրայ: Գէթ Յոյն նախարարք՝ հրաժարելով՝ տեղ կը փոխէին:

Գեր-Դիմաքսեան միշտ կը հրաժարի և նոյն տեղն է միշտ, եւ սակայն . . . չը շարժիր, Բայց ինչ կ'ապացուցանեն այդ հրաժարականք, Մէկ կողմանէ կապացուցանեն յայտնապէս Լոյսի նախկին խմբագրապետին կարեւորութիւնն, ամէն տեղէ կը խնդրուի նորին Գերապատուութիւնն, Այդ հրաժարականք կ'ապացուցանեն միւս կողմանէ թէ . . . Հմայեակ եպիսկոպոս իր անձին տարապայման կարեւորութիւն կուտայ, թէ ինքզինքն անհրաժեշտ կը նկատէ կեդրոնին մէջ, Աստիճանս գէմ պիտի բողբէ Գեր. Դիմաքսեան, պիտ' առարկէ իր յաւիտենական հիւանդութիւնն, Անտարակոյս եկեղեցականի մը խօսքին հաւատք չընծայելու մեղքը չը պիտի գործեմ, բայց պիտ' ըսեմ թէ առաջնորդութենէ հրաժարող եկեղեցականաց հիւանդութիւնն աւելի բարոյական է քան մարմնական, Արդ, այդ կրկին հիւանդութեանց դէմ ալ—կարծեմ—և ո՛չ դեղ մ' այնքան ազդու է որքան տեղափոխութիւնը, ճանապարհորդութիւնը, գաւառաց օդը, շինական կեանքը, շփումն հանապազօրեայ՝ մշտական մարդոց հետ, մասնակցութիւնն իրենց կենաց և իրենց գործոց, կեանքն անօձիք և անպատրուակ, աղօթքն ու պատարագն ի տաճարին որոյ խորանին վրայ չեն ծիծաղիր կեղծ ծաղկունք ու չեն հայհոյեր, նրբաթել ժանեակք, հսկողութիւնն այն յարկին վրայ որ դպրոց մը պիտ' ըլլար՝ եթէ գոմ մը չըլլար, եթէ ուսեալ ուսուցիչ մ' ըլլար հոն, եթէ գտնուէր հոն նոր եղանակաւ դասագիրք ու դասարան, եւ հաճոյքն հոն չէ՞ միթէ. գոմը դպրոցի փոխարկելուն մէջ չէ՞ հաճոյքը, հաճոյքն՝ այն գաւառաց աւեր եկեղեցիները նորոգելու մէջ չէ՞ միթէ, հաճոյքն հոն չէ՞ միթէ, արեւմտեան կամ ամերիկեան քարոզչի մը հետ մը-

ցելուն և Լուսուորչայ հօտն իւր փարախէն գուրս հանել չը տալուն մէջ. հաճոյքն հոն չէ միթէ, արգիլելու մէջ որ գաւառացիք գաղթեն ի Ռուսահայս (ուրկէ պիտի վռնտուին խեղճերը), գաղթեն Կորնթոսի պարանոցն՝ ուր մութն սւ մեքենան, ու կարօտն ու կարօտութիւնը կը տասանորդեն հէգ գաւառացի Հայերն, որոնք Կորնթոսէն աւելի հեռու տեղեր ալ կը գաղթեն, կը գաղթեն Ովկէանոսէն անդին, ուր կը հատնի իրենց ցեղն ու մինչեւ իսկ իրենց գերեզմանն անյայտ կորնչի։ Այո՛, հաճոյք կայ այս աշխատութեան, այս գործունէութեան մէջ. եւ ոչ միայն հաճոյք, այլ և առողջութիւն կայ հոն, առողջութիւն՝ ում ամեն բանէ աւելի կը ցանկան բնականաբար հիւանդ եկեղեցականք։

Թերեւս բժիշկք իսկ այդ եկեղեցականաց կարգիւն հեռանալ մայրաքաղաքէն, կը պատուիրեն խորշիլ աշխատութենէ, տեղաւորիլ իրենց թաղին մէջ, իրենց տան մէջ, ու դեղաւորիլ, դեղաւորիլ՝ Արդ, քանի որ առիթն ներկայացաւ, յայտնեմ թէ, բժիշկներն յարգելով իսկ, բժշկութեան չեմ հաւատարեալ եւ Եւ կյորդորեմ խոնարհաբար հիւանդ եկեղեցականներն որ ինձ հետեւին այս նկատմամբ, իմ երկար հիւանդութեանս պարտիմ իմ թերեհաւատութիւնս բժշկութեան վրայ. հիւանդութեանս պատճառու շատ բժշկական գրքեր թղթատելով և շատ հիւանդաց վրայ ուսումնասիրութիւններ ընելով, համոզուեցայ թէ բժիշկք ընդհանրապէս առ խարիսափ կ'ընթանային։ Ո՛ւր որ քալել պէտք էր, նստել կը պատուիրէին. ո՛ւր որ մարտելու պէտք կար, ուտել կը պատուիրէին. ո՛ւր որ դեղի բնաւ պէտք չը կար, երեք դեղադիր կը դրէին. ուր հիւանդն օդի ու արեւի պէտք ունէր, բարձանց պէտք

ունէր, փոփոխութեան պէտք ունէր, խցարդելութեան, խոնաւութեան, միօրինակութեան, տրտմութեան կը դատապարտէին զայն: Եւ այս ամենն համազմամբ անտարակոյս. Բարիզի Համալսարանին մէջ այնպէս ունան. Վարդապետեմ աւագ, կը ճանաչեմ բաղմամբիւ զգերդատան մը, ոյր եօթն տնդամբ բժշկաց կողմէն (ամենէն մեծահամբաւ բժիշկը կը մտնեն միշտ այդ գերգատանին մէջ) բացարձակապէս դատապարտուեցան. դատապարտեալներէն երկուքը մեռան: Տինգը կ'ապրին դեռ Մին բերանը բնաւ դեղ չը դնէր այլևս, չարածար կ'աշխատի պահք պահելու պայմանաւ⁽¹⁾ և յայտնապէս այդ աշխատութիւնն իրեն իբրեւ օգնուագոյն դեղ կը ծառայէ. երկրորդն ինքն իրեն տեղ կ'ընէ, երբ անհրաժեշտ պէտք զգայ. միւսներն այլեւայլ բժշկաց ձեռօք կը դարմանուին մերթ, եւ կ'ապրին դեռ. միայն թէ աւելի զէչ կ'ապրին քան առաջին երկուքն, ոյր օձիքներն ազատեցին բժշկաց ձեռքէն և առողջ մարդկան կարգին գրեթէ: Կը ցաւիմ որ, բժշկաց մէջ այնքան բարեկամներ ունենալով հանդերձ, հարկագրուած եմ խօսիլ բժշկութեան դէմ: Սակայն բժիշկը պիտի ներեն ինձ, քանզի գրագիտաց մէջ ալ բարեկամներ ունենալով և եւ ես ինքն ալ գրագիտաց դասուն պատկանելով հանդերձ, կը խօսիմ մերթ գրականութեան դէմ: Բժիշկը՝ սակայն իրենց արդարացման համար շատ բաներ ունին. հիւանդաց ընդհանրապէս օգիտութիւնն, հիւանդապահից անփորձութիւնը, զեղագործներու պաշտօն ճիտութիւնն և մանաւանդ գիտութեանց յառաջագիտութիւնը, Դիպուածով կը բանամ բժշկական գիրք մը և կը կար-

(1) Հետքերական պարագայ մ'է այս. ճարապայման աշխատութիւնն սպառիչ է՝ մանաւանդ պահեցողութեամբ:

դամ. « Զուտ գոհուք, որպէս բարկօղին, շաքարօղին կեռասօղին, գիօղին, փոքրաքանակ առնուելով, ամենարագ ազդեցութիւն կ'ընեն ստամոքսին վրայ, և ստամոքսի անհանդստութեան ինչ ինչ պարագայից մէջ ամենակատարեալ եւ ամենարագ արդիւնք յառաջ կը բերեն: Այս իրողութիւնն անվիճելի դիտողութեամբ հաստատուած է, պարտինք ընդունել զայն ի հեճուկս բնախօսական փորձարկութեանց՝ որք կը յաւակնին ապացուցանել թէ անջրախառն գոհոյն ստամոքսի պաշտօնները կը խափանէ:» Բժիշկը, գիտունն ինչ ընէ, երբ դիտողութիւն ու փորձարկութիւն՝ արդի գիտութեան այն երկու հզօրագոյն գործիք՝ անմահաձայն կը գտնուին միմեանց:

Կը համարձակիմ՝ արդ՝ մեր հիւանդ եկեղեցականաց յանձնարարել առաջնորդութիւնն իբրեւ լաւագոյն դեղ: Իրենց հիւանդութիւնն աշխատութեամբ միայն կրնայ բուժուիլ. եւ հոն կայ աշխատութիւն, գաւառաց մէջ. «Իժուար է աշխատութիւնն ի գաւառս:» Արդարեւ, եւ այս պատճառաւ է որ ազգային վարչութիւնն առաջնորդութեան չը զրկեր լուսարարը կամ ժամկոչ աղբարն, այլ զձեզ, Սրբազան Հայրք: Պէտք է աշխատիլ, պէտք է մաքառիլ գաւառաց մէջ, այո՛: Ձեր հիւանդութիւնն ալ զայդ կը պահանջէ. Զգային-արեւային տկարութեան դէմ մարմնամարդ, աշխատութիւն, պայքար կը պատուիրէ գիտութիւնն: «Այն աշխատութիւնք, որք միանգամայն զօրութեան և արագութեան մեծ սպառում կը պահանջեն, կ'արժանանան բռնադատեալ աշխատութիւն անուան» կը գրէ Տօքդէօն Լակուանժ:» Առաջնորդական աշխատութիւնք ալ միշտ այդպիսի ուժոյ սպառում կը պահանջեն, պիտ'առարկուի: Առաջնորդական պաշտօնին

դժուարութիւնն՝ ներկայ պարագայից մէջ մանաւանդ ճանչելով հանդերձ, կըտարակուսիմ որ միշտ բռնադատեալիդուած աշխատանաց չափ աշխատութիւն պահանջէ, աշխատութիւն զոր բժշկութիւնն անտարակոյս կարգիլէ։ Մարմնոյ մարդանաց քնախօսութեան հեղինակն նոյն էջին մէջ կը յիշէ ձիուն օրինակն, «այն ազնիւ կենդանւոյն ուր, ըստ Պիւֆօնի բացատրութեան, կը մեռնի լաւ եւ հնազանդելու համար»։ Մեր եկեղեցականաց համար ալ, միթէ լաւագոյն չէ՞ մեռանիլ քան անհնազանդ գտանիլ եկեղեցւոյ գլխոյն։

Փ Ո Ւ Ն Ջ

Եթէ վերագրեալ տողերն յուզմամբ չը գրէի, պիտի յիշէի զուարճալի խօսակցութիւն մը՝ փունջին առթիւ։ Բայց յիշեմ. ընթերցողք ընդհանրապէս չեն սիրեր յուզուիլ, եւ իրաւունք ունին. յուզումն առողջութեան թշնամին է։ Արդ, բարեկամ մը կըսէր ինձ երէկ «Փունջն ալ խափանեցաւ»։ Առջի օրուան Արեւելքն ընթերցած չըլլալով տակաւին՝ տեղեկութիւն չունէի կրօնական ժողովոյն որոշումէն. ուստի հարցուցի. «Փռջն ինչու խափանեցաւ. Ալաճաճեան օրինաց չըջանակէն դուրս ելնող մարդ չէ»։ «Փունջն արգիլուեցաւ» կրկնեց բարեկամս, փոխելով շփոթութիւն պատճառող խափանելէ բայն. «Հասկցայ. բայց ինչ պատճառաւ, Փռջն արտօնեալ թերթերէն է» — «Ննջեցելոյ դաժաղին վրայ փունջ դնելն արգիլած է կրօնական ժողովը» — «Այդ լուրն ինձ մեծ գոհութիւն պատճառեց» — «Բնականաբար, դուն որ տնտեսագիտութեան բարեկամ ես»։

Այո, ծաղկանց սիրահար եմ, այն տատիճան որ ծաղիկ չսիրող մարդը՝ մանաւանդ կիներն՝ անկարող եմ սիրել. սա-

կայն՝ իբրեւ ընկերական մարդ՝ սիրահար եմ Տնտեսագիտութեան, տնտեսութեան, կը հաշուի թէ Տիկին Կիւլպէնկեանի դադադին վրայ հարիւր ոսկւոյ փունջ դրուած է: Յուշարկաւորութեան ներկայ գտնուողներէն շատեր երեկոյին կը խօսէին. — հանգուցեալ առաքինասէր տիկնոջ վրայ. — ոչ. փունջերուն վրայ. փունջերը կը բաղդատէին, փունջերը կը գովէին, փունջերու տէրերը կ'պանծացնէին կամ կը խծբծէին՝ հանգուցեալը գովելու տեղ, կը տեսնենք թէ փունջի դուրսիւնն ոչ միայն տնտեսական, ոչ միայն կրօնական, այլ և բարոյական տեսակէտով ալ է դատապարտելի: Հին ժամանակն, երբ մեռելին վրայ փունջի տեղ արտասուք կը թափուէր, յուշարկաւորք՝ վերադարձին՝ հանդիսին վրայ չէին խօսեր, այլ հանգուցելոյն վրայ: Ստակ վրայ տանք, բարոյականնի՞ս ալ վրայ տանք: Հարիւր ոսկի փունջի տալ, եւ ուրկէ՞ գնեցինք այդ փունջն. — օտարէն. — գէթ ազգային բուրաստան մ'ունենայինք՝ ոյր հասոյթն Ազգային հաստատութեան մը յատկացած ըլլար, և այդ ծաղկոցէն գնէինք փունջն: Այլ մեր օտարամոլ Հայերն նորէն Եւրոպական ծաղկոցին տալ պիտի սիրէին իրենց ստակն:

Ինչ ալ ըլլայ, կրօնական ժողովը լաւ, ամենալաւ ներշնչում մ'ունեցած է, արգիլելով դադադներու վրայ փունջ դնել, իբրեւ օտարամուտ և իբրեւ անտնտեսական սովորութիւն: Սակայն չը պիտի դովէի Կրօնական ժողովը, եթէ յատուկ պաշտօնէի մը ձեռօք վերցնել տար դադադի մը վրայ դրուած փունջն: Աստուծոյ դէմ հայհոյութիւն չէ՝ սիրելեաց դադադին վրայ ծաղկեփունջ դնել, սակայն օտարամուտ է, սակայն տնտեսութեան դէմ է, սակայն պարզութեան դէմ է, սա-

կայն թատերական կամ պարահանդիսական է: Բաւական է որ կրօնական ժողովոյ որոշումն արձանագրուեցաւ. մամուլն, այս որոշմանէն աւելի համարձակութիւն առած, պարտահետեւ պիտի պաիտարակէ դադարի վրայ փունջ դնող անձերը կամ գէթ անյիշատակ պիտ' անցնի փունջերն: Եւ ամեն պարագայի մէջ ալ լաւ է որ՝ Աղգային Վարչութիւնը, միայն թէ իր որոշմունք յօգուտ աղգին ըլլան: Խորհրդակցի մամլոյ ներկայացուցչաց հետ եւ պատրաստէ հանրային կարծիքն իր որոշմանց գործադրութեան համար:

Կրօնական ժողովոյ որոշմանց մէջ եպիսկոպոսաց գաւազանակրութեան նկատմամբ որոշում մ' ալ կարգացինք, որ մեզ ալ անսխորթ թուեցաւ՝ որպէս Մարիս շաբաթաթերթի Խմբագրապետին: Ի բացակայութեան Պատրիարքին, որ Պօլսոյ առաջնորդն է, նախապատիւ եպիսկոպոսը պիտի կրէ գաւազան: Բայց ո՞վ պիտ' որոշէ նախապատուութիւնն: Այս որոշումն եկեղեցականաց նախանձն իրարու դէմ գրգռելէ և կազուկուիւ առթելէ զատ արդիւնք չը պիտ'ունենայ: Եւ ճախարհասիր բառն՝ եկեղեցականներէն արտասանեալ՝ լաւ չը հնչեր հաւատացելոց ունկան:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՄԷՁ

Ընդհանրապէս մալ դոց միտքն ամենն աւելի զբաղեցնող բանն է հարստութիւնն, եւ թերեւս ամեն դարերէ աւելի մեր իննեւտասներորդ դարուն մէջ. Աղքատն ու փարթամն հաւասարապէս հարստութեան վրայ կը խորհին. տգէտն ու գիտունն հարստութիւնն ունին իրենց մտածմանցն առարկայ. Աղքատն հարուստ ըլլալ կը տենչայ, փարթամն ալ կը ցանկայ փարթամագունին հարստութեան: Տգէտն ինքնին կը հարցնէ թէ մարդս ի՞նչպէս կրնայ հարստանալ. գիտունն ալ կ'ուսումնասիրէ հարստութեան պատճառներն:

Հարստութիւնն իղձ մ'էր. հարստութիւնն այսօր գիտութիւն մ'է կամ հարստութիւնն այսօր գիտութիւն մ'ունի: Այս գիտութիւնն եռանդեամբ կը մշակուի քաղաքակիրթ ամեն ազգաց մէջ, կ'ուսուցուի իրենց վարժարանաց մէջ — ոչ միայն տղայոց՝ այլեւ աղջկանց վարժարաններու մէջ: Տղայք՝ դպրոցէն սկսեալ՝ կ'երազէին հարստութիւն. տղայք այսօր կ'ուսանին դպրոցներու մէջ թէ հարստութիւնն ինչպէս կը գոյանայ, կը շրջաբերի ու կը բաշխուի. կ'ուսանին տղայք թէ հարստութիւնն ինչ միջոցներով կը ստացուի եւ ինչ միջոցներով կ'արդիւնաւորի:

Տղայք կ'ուսանին՝ կ'ըսենք՝ հարստութեան գիտութիւնն: Այլ ո՞ր տղայք. Այն տղայք ոյք գլխարկ կը կրեն, Եւրոպացի տղայք. Հայ տղայոց մէջէն հազիւ հարիւր հոգի բարեբաղդութիւն ունին ուսանիլ այն կարեւոր գիտութիւնն, որ հազիւ երեք կամ չորս վարժարանաց մէջ մուտ գտած է տակաւին: Ինչո՞ւ այսքան կ'արհամարհենք այս գիտութիւնն: Որովհետեւ աղքատ մնալ կ'ուզենք: Ոչ տնտարակոյս. ոչ ոք աղքատ մնալ կ'ուզէ այսօր. կամաւոր աղքատք վարձ առնողին մէջ մնացին: Կրնանք ըսել որ տնտեսագիտութիւն ուսուցանել կամ ուսանիլ չենք ուզեր, որովհետեւ տգէտ մնալ կ'ուզենք:

Ասի ճշմարտութիւն մ'է. տգէտ մնալ կ'ուզենք: Ժաման-

նակ մը գիտութիւնն առ մեզ կը կայանար քերականութեան մէջ. չը գիտեմ՝ այսօր ինչ բանի մէջ կը կայանայ, բայց կրնամ ըսել թէ՝ դրական բաներու ծանօթութեան մէջ չը կայանար դեռ ընդհանրապէս: Չենք սիրեր, չենք ուսանիր տնտեսագիտութիւն, որովհետեւ այդ գիտութեան առարկայն դրական բան մ'է: Տնտեսագիտութեան դասարանին մէջ ամպ չը կայ, չը կան վարդագոյն ամպեր, որոց վրայ դիցուհի մը շրջի յերկինս, եւ յերկնից ժպտի մեզ, եւ մեր գոգն երկնականմարէն տեղայ մարգարիտներ... երեւակայական: Տնտեսագիտութեան դասատուն՝ զմեզ այս աշխարհիս վրայ, մեր աշխարհին մէջ պիտի չըջեցնէ. աշխարհիս մէջ, ուր մարդիկ՝ գործածործ (blouse) կամ ծիրանի հագած՝ հաւասարապէս կը վարեն կենաց պայքարն: Այդ պայքարին նման միօրինակ, այլեւ այդ պայքարին չափ այլափոփոխ բան չը կայ: Աշխատութիւնն ամենուրեք նոյնն է. Սակայն երկրէ երկիր, ժամանակէ ժամանակ որքան կը փոփոխին աշխատութեան պայմանք, աշխատութեան եղանակը:

Նախ, առանց գործեաց կ'աշխատի մարդս, կամ թէ՛ իր մարմնոյ անդամներն, իր եղունգներն իբրեւ գործիք կը գործածէ. եւ անհատն՝ յայնժամ՝ իր արտադրութեան արդիւնքէն ինք միայն կ'օգտի. եւ իր արտադրութեան արդիւնքն նոյնժամայն կը սպառի: Թափառական եւ աննախահոգ, ո՛չ սեփականութիւն ունի ո՛չ փոխանակութիւն կ'ընէ: Տնտեսագիտութիւնն անդանօր նիւթ չունի:

Սակայն մարդս որ՝ բարեշրջութեան օրինօք՝ կիսանասնական կամ բուսականդանական վիճակէ բարձրացած է անասնականի եւ անասնականէ վայրենականի, այդ վայրենական վիճակէն ալ տակաւ պիտի բարձրանայ: Դործածուելով պիտի զարգանայ գործարանն, նորանոր պաշտօններ պիտի ստանայ. մտային կարողութիւնք ալ զգայարանաց հետ զուգահեռաբար կամ մանաւանդ զուգակցաբար պիտի զարգանան: Մարդս տակաւ պիտի տարածէ նիւթոյն վրայ իր իշխանութիւնն. նիւթն իր ձեռաց տակ անզգալապէս պիտի կեղաբարանափոխի, եւ շարժելով ու ձեւափոխելով նիւթն, ինք՝ մարդն ալ՝ պիտի շարժի ու ձեւափոխի, կերպարանափո-

խի: Պիտի սեփականէ առարկայն, որուն վրայ խորհած, որուն վրայ քրտինք թափած է, որուն փոխադրութիւն կամ ձեւափոխութիւն տուած է. զայն ուրիշ առարկայի մը հետ պիտի փոխանակէ: Առեւտուրը պիտի սկսի: Կենաց պայքարն այդ շրջանին մէջ կը կանոնաւորի: Բուն զօրութեան կը յաջորդէ համաձայնութիւնն. համաձայնութիւն անհատից միջեւ, համաձայնութիւն ժողովրդոց միջեւ. Բերանացի պայմանագրութիւն, գրաւոր պայմանագրութիւն:

Եւ միշտ կը կուրին սակայն մարդիկ: Դասակարգք, արհեստագետութիւնք յառաջ կուգան: Պայքարն իրենց ծոցոյն մէջ, պայքարն իրենց ծոցէն դուրս, բնութեան դէմ եւ իրարու դէմ: Ոսկւոյ հանքերու գիւտն արհեստից եւ առեւտրոց մէջ, նոյն իսկ ընկերական վիճակին մէջ կերպարանափոխութիւն մը յառաջ կը բերէ. մեքենայի մը գիւտն ի սկզբան կը վրդովէ շահերն ու յետոյ կը համաձայնեցնէ զայնս: Խորհողք նոյնօրինակ չեն խորհիւ: Նոյն նիւթոյն վրայ. Գիտուն մը կը մտածէ թէ հողագործութիւնն է հարստութեան մեծագոյն աղբիւրն. ուրիշ գիտուն մը կը պնդէ թէ ճարտարարուեստք երկրի մը հարստութեան մեծագոյն աղբիւրն են. վաճառականութիւնն արհեստ չէ՝ կ'ըսէ մին, միւսոյն համար վաճառականութիւնն ոչ միայն արհեստ մ'է. այլ եւ քաղաքակրթութեան մէջ կարեւորագոյն դեր կը կատարէ. վարկի հաստատութիւնն իր ախոյեաններն եւ իր հակառակորդներն ունի. Գաղթականութիւնք ազգի մը զարգացման համար էական կը նկատուին յոմանց եւ աղիտաբեր յայրոց. Հարստութեան բաշխումն արդի ընկերութեան մէջ արդար չէ՝ կ'աղաղակէ հրապարակագիրներու դաս մը, իսկ այլ հրապարակագրաց դաս մը կը ջատագովէ արդի տնտեսական դրութիւնը. Մաքսատանց բարձունքն ի տնտեսագիտաց կը պահանջուի, մինչ պետութիւնք ոմանք եւս քան զեւս կը բարձրացնեն մաքսերն:

Մարդկային ընկերութիւնն՝ այս պայքարներուն մէջտեղ, այս հակասութեանց մէջ եւ հակառակ այս հակասութեանց յառաջ կ'ընթանայ յաւէտ: Հարստութիւնն՝ ընդարձակագոյն առմամբ՝ այս ջանից եւ այս վիճաբանութեանց առար-

կայն է: Գիտութիւն մը կայ որ կզբաղի տնտեսական շարժմամբ, որ շահաւէտ է ամեն մարդու համար: Եւ ահա այդ գիտութիւնն է, զոր՝ չը գիտեմ քանիերորդ անգամն է՝ կ'առաջարկեմ մուծանել ազգային վարժարանաց մէջ առհասարակ:

Այսպիսի առաջարկութեան մը գործադրութիւնն՝ ըստ ոմանց՝ երկու արգելանաց կը բաղխի. դասագրքի չը գոյութիւն, դասատուի չգոյութիւն: Լսած եմ այս կրկին առարկութիւններն ալ, եւ կը պատասխանեմ. Դասագիրք, ահա՛ իւթիւճեանն, ահա՛ Պէրպլէրեանն, ահա՛ Բարունակեանըն, ահա՛ Արեւելեան մարկոյ հրատարակածն՝ որ դասագրքէ ալ աւելի է: Բայց ի՞նչ հարկ դասագրքի, երբ դաստու ունինք. քանզի, այո՛, ունինք ֆաղաքական տնտեսութեան դասատու: Տնտեսական, ելմտական եւ իրաւաբանական ճիւղերն Հայ ուսուցչաց ձեռամբ կը դասախօսուին Պետական բարձրագոյն վարժարանաց մէջ, ուսուցիչք՝ ոյք կը յարգուին նոյն իսկ Եւրոպայի գիտնոց կողմանէ (*): Մամուրեան՝ Սագրզ էֆէնտիի եւ Մելքում խանի դասընկերը՝ բազում ամերէ հետէ Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանին մէջ, եւ Պէրպլէրեան՝ որ գրեթէ ամեն բան կը պարտի իւր հանճարոյն եւ աշխատութեան՝ նոյնպէս քանի՛ տարիներէ ի վեր համանուն վարժարանին մէջ կ'ուսուցանէ տնտեսագիտութիւն: Շահնազար էֆէնտի՝ որ Բարիզի իրաւաբանական Համալսարանին մէջ հետեւած է Ֆռանսայի արդի մեծագոյն տնտեսագէտին դասուց՝ կեդրոնական վարժարանին մէջ կ'աւանդէ տնտեսագիտութիւն: Հրանտ Ասատուր էֆէնտի՝ որ իրաւաբանութեան հետ տնտեսագիտութեան վկայական ունի Բարիզի բարձրագոյն հեղինակութիւններէն, եւ որ ընդհանուր թէ՛ տեղական տնտեսագիտական խնդրոց վրայ գրեց

(*) Մոռցում չէ մեծանուն Վիլեմէ Տնեսագիտին կարծիքն ողբացեալ Աղաթօն էֆէնտիի վրայ: Հանգուցելոյն հօրաժան որդին՝ Երուանդ էֆէնտիին յայտնեց մեզ Թէ հայրն երկասիրութիւն մը պատահած էր Թուրքիոյ տնտեսագիտութեան վրայ, երկասիրութիւն ծանօթ Բարիզի ֆաղաքական տնտեսութեան ընկերութեան՝ ըստ Թղթակցութեանց Աղաթօնի, այլ ոյր մեռագիրն անյայտ եղած է:

այնքան ընտիր յօգուածներ՝ չըպիտի զիջանէր միթէ ազգային վարժարանի մը մէջ դասախօսել Քաղաքական տնտեսութիւն, եթէ Հոգաբարձութիւնք կամք ունենային եւ կոչում ընէին սոյն գերագնիւ ու բարձրարժան երիտասարդին ազգասիրական ու կրթասիրական զգացմանց:

Կը տեսնենք թէ պատրուակներ ունինք, այլ ոչ պատճառ, ո՛չ արգելք՝ տնտեսագիտութիւն չուսուցանելու մեր վարժարանաց մէջ: Տգէտ մնալու յօժարութիւն, ահա՛ ինչ որ ունինք: «Տղաս, յաւելում գիտե՞ս.» — «Այո՛, Տէր.» — «Թաւելումն ինչպէ՞ս կ'ըլլայ.» — «Թիւերը տակէ տակ գրելով.» — «Եկուր միասին պտըտինք եւ յաւելման նիւթեր գտնենք, որպէս զի լաւ յաւելում մ'ընես ինձ. գրէ՛ Անտարբերութիւն.» — «Գրեցի.» — «Գրէ՛ սովորամոլութիւն.» — «Գրեցի տակը.» — «Գրէ՛ ցուցամոլութիւն.» — «Գրեցի անոր տակը.» — «Գրէ՛ վիպամոլութիւն.» — «Այդ ալ գրեցի.» — «Գումարէ.» — «Գոյականի յաւելում չեմ սորված. սակայն այս գոյականներուն գումարը տգիտութիւն կրնայ ըլլալ.» — «Կեցցես. Դուն քու վրադ հսկած ու հսկող Հոգաբարձութիւններէն աւելի կ'արժես»:

Ե.

Մ Ի Ն Ա Ս Զ Ե Ր Ա Ձ

(Մինաս Չերազ էֆէնտիին անուան տարեդարձին օրն՝ Ազգային Կեդրոնական վարժարանի գրագիտութեան բարձրագոյն դասարանին մէջ հետագայն խօսեցանք, միանգամայն իբրեւ տարագրութեան նիւթ ուսանողաց.)

Բարեկամք իմ,

Վարժարանիս Խնամակալ-Տնօրէն եւ իմ մեծագոյն բարեկամ Մինաս Չերազի անուան տարեդարձին առթիւ կ'ուզեմ քանի մը խօսք ընել ձեզ:—

Իմ աչքերս բացուած են վարդից հանրապետութեան մը մէջ, եւ իմ հոգիս փթթած է սուրբ պատկերաց երրորդու-

թեան մ'առջեւ, Պէշիքթաշի Տիրամօր տաճարին վերաշինութեան առթիւ՝ երեք հին պատկերք տարուած էին տունն աւագերիցուն, որ էր մօրենական հաւս՝ Տէր Յովհաննէս աւագ քահանայն (*): Մին Աստուածամօր պատկերն էր, միւսն Աստուածորդւոյն. երրորդն էր Սրբոյն Մինասայ պատկերն: Այս պատկերաց փոխադրումն ի մեր տուն՝ փոխարկած էր զայն բոլորովին յաստուածային տուն. հոն հաւատացեալք կուգային ծնրադրել. հոն միմ կը բերէին կամ կը յղէին վառել, մանաւանդ սուրբ Մինասայ պատկերին առջեւ: Անոնք որ դրամ էին կորուսեր կամ գոհար, անոնք որ իրենց զաւակն էին կորուսեր կամ իրենց յոյսն, անոնք որ երկիւղ ունէին կորուսանել իրենց գոյքն եւ կամ իրենց խելքն, ամենքն ալ իրենց եռանդեան կամ իրենց քսակին մեծութեամբ միմ կը բերէին սուրբ Մինասին: Կորստագիւտ սրբոյն աշտանակն առանց միմի չը մնաց օր մը. կորուստք անտարակոյս կը գլուխուէին:

Կը մտածեմ, եղբարք, թէ գտանող մ'է նաեւ Մինաս Չերազ: Գտանող անունն արդէն նոր չէ գրականութեան մէջ. ծանօթ են ձեզ միջին դարու բանաստեղծք, ոյք կոչուէին դոուսասուռ, դոուվեռ, այսինքն գտանող, ստեղծող: Ի՞նչ գտաւ Մինաս Չերազ:

Երեք գիւտ ըրաւ նա:

Մինաս Չերազ գտաւ հիմունքն ազգային դաստիարակութեան: Բազումք կրթական խնդիրն ուսումնասիրած էին, բազումք գծած էին դպրոցական յատկագիծներ, ու բազումք պատրաստած՝ ազգային կրթութեան ծրագիրներ: Ազգային դաստիարակութեան հեղինակն է որ պարզեց Հայ մանկուոյն յարմարագոյն կրթութեան ծրագիրն: Հայ մանուկըն ընտելարանին մէջ — ըսաւ Մինաս Չերազ վարժապետական ժողովոյն մէջ — երեք բան ուսանիլ պարտի. Ազգային

(*) Այս քահանայն սուրբ մը կը նկատուէր, Հաւուս պատարագած պահուն, Միսաք Աղայի կինը տեսած էր թէ պատարագութիւն ոտքը գետնէն կտրած էր եւ հրեշտակը գետնէն վեր բռնած էին պատարագութիւն իրենց թեւոց մէջ՝ մինչեւ յաւաքս պատարագին: Նմանօրինակ բաներ դեռ կը պատահուին:

կրօնք, Ազգային լեզու, Ազգային պատմութիւն։ Այլ Հայ մանկուոյն եւեթ, մեզ նման բացառիկ դրից մէջ գտնուող ազգայն եւեթ կը պատշաճի սոյն ծրագիրն։ Ո՞չ ապաքէն իմաստնագոյն ազինք՝ ոյք կանոնաւորագոյն վիճակ ունին՝ կը գործադրեն սոյն ծրագիրն։ Ո՞չ ապաքէն բնական է, բանաւոր է, ո՞չ ապաքէն արդի մանկավարժութեան համաձայն է՝ կրթութիւնն սկսիլ այն առարկաներէն, ոյք մօտաւորագոյն են մեզ, ոյք ամենէն աւելի կը շահագրգռեն զմեզ։ Եւ ազգային դաստիարակութեան այդ երրեակ առարկայք տաղտկացուցիչ են միթէ։ Երբ լաւ դասախօսուի, — երբ Օսմանեան մեծանձն վեհապետաց առ Հայս պարգեւած առանձնաշնորհմանց գնահատիչ զգօն ուսուցչաց կողմանէ դասախօսուի Ազգային պատմութիւնն, — հրապոյրէ զո՞ւրկ է միթէ այդ ուսումն։ Ամեն շրջաններէն, ամեն աստիճաններէն ալ քաղաքակրթութեան անցած է Հայ ազգն։ Արեւելից եւ Արեւմտից ամեն ժողովրդոց հետ շփուած է Հայն։ Արիական ազնուագոյն ցեղին շառաւիղ, եթէ ոչ այդ շառաւիղաց ոմանց ըստ ամենայնի պայծառութիւնն է ունեցած, այլ իր յոգնադարեան կենաց մէջ պահած է միշտ իր ինքնութիւնն, եւ առ Օսմանեան Պետութիւն պահած է յաւէտ ու պիտի պահէ յաւիտեան իր աղամանդեայ հաւատարմութիւնն։ Այլ եւս չունի փառքն՝ օտար ազանց իշխաններ նուիրելու։ սակայն թերեւս մեծագոյն փառքն ունի մեծագոյն կայսրութեանց ընծայելու բարձրագոյն պաշտօնեաներ, ոյք որքան հանճարով նոյնքան հաւատարմութեամբ կը ծառայեն պատկան պետութեանց։ Այսպէս է մեր պատմութիւնն։ — Իսկ մեր լեզուն, նոյնպէս հրապուրիչ չէ՞ միթէ Հայ լեզուն։ յոգնարմատ յոգնաձեւ, ճոխ ու փոփոխ, միացնելով իր այբենարարին մէջ կրկին ձայնաշարներն ալ դաշնական ու դժական, ամփոփելով իր բառարանին մէջ բառեր ոստանիկ գրական ու բառեր ուամիկ գործածական, կրկնակ եւ իր քերականութեան մէջ՝ երկաթեայ կանոնաց ենթարկելով դիտական լեզուն եւ շնորհելով բանաստեղծականին ամենայն ազատութիւն։ բարբառ երկակենցաղ, կեանք ունենալով անցելոյն մէջ եւ կեանք ֆերկային մէջ, ապրելով յերկինս եւ յերկրի։

բարբառ, որ այնպէս ընդգրկած է Ս. Գիրքն՝ հրաշակերտն այն հրաշակերտից, մինչ զի հայ թարգմանութիւնն Աստուածաշունչ գրոց՝ հաշակուած է թագուհին թարգմանութեանց։ Արդարեւ, գոգ հայ լեզուաւ Մովսէս կը պատմէ զարարչագործութիւն ու Սինայի վրայ Եհովա գոգ հայ լեզուաւ կ'որոտայ, այդ լեզուաւ գոգ կ'եղերգէ Դաւիթ առ գետս Բաբելացոց։ այդ լեզուաւ գոգցես Եկղեսիաստես կը գոչէ ունայնաթիւն։ գոգ այդ լեզուաւ կ'անիծէ Յոր ծնած աւուր արուսեակն։ այդ լեզուաւ Եսայի՝ վսեմագոյնն ի մարգարէս եւ ի մարդիկ թերեւս՝ կը մարգարէանայ կործանումն Երուսաղիմայ։ գոգցես Հայ լեզուաւ հրեշտակն երկնից՝ կ'աւետէ փրկչին ծնունդն առ մարգկութիւն, եւ նոյն Հայ լեզուաւ գոգցես Յիսուս կը քարոզէ հաւասարութիւն եւ եղբայրութիւն — իսկ մեր կրօնքն, ո՛հ, ո՞ր կրօնք այնքան կրօնապէս կը դաւանի զԱստուած, ո՞ր կրօնք այնքան մարդկային՝ միանգամայն եւ այնքան աստուածային կերպիւ ըմբռնած է զԱրարիչն։ Հայ եկեղեցւոյն մէջ Աստուած իբրեւ միապետ չը պատուիր, այլ իբրեւ հայր երկնաւոր, ըստ բանից եւ ըստ պատուիրանաց իսկ աննման Յիսուսին։ քահանայն ու քահանայապետն հաւասարապէս ժողովրդեան ձայնիւ կը կոչուին ի պաշտօն եւ ի պաշտամունս։ եկեղեցական եւ աշխարհական, իշխանն ու շինականն հաւասարապէս որդիք են երկնաւոր հօրն, որ գերազանցապէս Աստուածն է հաւասարութեան։ Հայ եկեղեցին եղբայրութեան ու ներդրութեան եկեղեցին է։ ունի խոստովանութիւն, այլ ոչ հաւատաքննութիւն։ Հայաստանեայց եկեղեցին կ'օրհնէ զանոնք ոյք կը խորհին ու կը հաշուեն ու կը գտնեն, զանոնք որք կը գտնեն ու կը քարոզեն քանակագիտական ճշմարտութիւնն։ եւ կ'աղօթէ Հայաստանեայց եկեղեցին անոնց համար ոյք կը քնեն, — Ահա, պարոնայք, հիմունքն ազգային դատարարականութեան, զորս գտաւ, զորս դրաւ Մինաս Չերազ։ Ազգային կրօնք, ազգային լեզու, ազգային պատմութիւն։ ահա Հայոց համար նախնական ու վերջնական ուսմունքն։ Այս կրթական ծրագիրն, որ՝ աւանդ պիտի գործադրուի տակաւին, չէ՞ միանգամայն ծրագիրն ազգային բարեկարգութեան։

Մինաս Չերազ գիւտ ըրաւ ազգային լեզուին մէջ ալ : Գտաւ ընտրողական աշխարհաբարն : Երբ ազգ մը քաղաքակրթութեան այն շրջանին մէջ կը մտնէ՝ որ դար երկարի կը կոչուի, երբ ընկերութիւն մը խարխափանաց եւ ոսկի պատրանաց ժամանակներն ետին արդէն ձգած է, երբ իրականութեան դէմ լուրջ պայքարներու դարուն մէջ է թեւակոխած արդէն, երբ կը տեսնէ թէ ստացեալ ծանօթութեանց ու յայտնեալ ճշմարտութեանց քանակն՝ յանդուս աւելի մեծ քանակութիւն մը կ'ենթադրէ ծանօթութեանց ու ճշմարտութեանց գտանելի գանձելի, մարդս պէտք կ'զգայ յայնժամ շուտ իմանալու, շուտ գրելու, շուտ գործելու, շուտ գտնելու : պէտք կը զգան ազգերն, այո՛, քաղաքակրթութեան ընթացքին մէջ որոշապէս եւ անդարձ մտնելէ յետոյ, նոր կաղապարի մը մէջ ձուլել իրենց լեզուն, ժամանակն, արդարեւ, ինքնին կը կատարէ նորոգութեան այդ անխուսափելի գործն : այլ կուգան նորոգիչք՝ որոնք իբրեւ կը մտրակեն ժամանակն, Ազգային լեզուի նորոգիչներուն մէջէն՝ կրնայ ըսուիլ՝ Մինաս Չերազ (ի շնորհս Այտընեանի գործոյն) ամենէն հմուտն եղաւ, եւ անտարակոյս ամենէն փայլունն՝ ի շնորհս իւր բնածիր հանճարոյն : Դեռ պատանի գրեթէ, հիւանդ, յուսահատ կեանքէն, այլ երբեք թերահաւատ ազգային կենաց նկատմամբ, քանի մ'էջներով պարզեց եւ փաստաբանեց նոր լեզուին քերականութիւնն արտաքոյ կարգի հատուածի մը մէջ ընդարձակ, զոր հրատաքակեց իւրեւ Առաջաբան իր անյանգ եւ յանգաւոր գրուածոց անդրանիկ Հաւաքածոյին : Նոր լեզու, նոր ոճ, նոր գաղափար : Եւ երբեք գրական գործ մը չէր այնքան դժուարձ գրական աշխարհն, այնքան յուզած գրագէտ եւ անգրագէտ հասարակութիւնն համանգամայն : քանզի ամեն ոք կ'ընթեռնուր Գրական փորձերն, ամենուրեք բարձրաձայն կը կարդացուէր ու կը խօսուէր Գրական փորձերու վրայ : Պահպանողականք՝ ընդհանրապէս քննադատութեան օրինաւոր սահմանն անցնելով տարաբաղդաբար՝ չը խղճեցին թշնամանել գրական նոր դպրոցին գլուխն : Իսկ նորասէր ու նորագամիտ անձինք բաւական ոյժ չէին գտներ իրենց ձեռաց մէջ ծափահարելու համար ու բաւական ծա-

ղիկ բնութեան մէջ՝ ձօնելու համար նորատի նորոգչին։ Նամակներ հաւանութեան, գնահատման, հիացման, եւ յաճախ ընտրողական աշխարհաքարով տողեալ (որքան յաջողէին նամակագիրք), կը տեղային Գրական փորձերու հեղինակին տունն՝ հեռուստ թէ մօտուստ, գաւառներէն ու գաղթականութիւններէն, դեռահաս ու չափահաս անձանց կողմէն, այլ մանաւանդ երիտասարդաց եւ երիտասարդուհեաց կողմէն։ Ի շնորհս մեր մտերմութեան, կը կարդայի շատ անգամ այդ գրերն։ Առ հասարակ՝ մէտէորայի մը տպաւորութեան ներքեւ կը գրէին խանդավառ հեղինակք այն թղթոց։

Եւ արդարեւ արդի Հայ գրականութեան մէջ ճշմարիտ մէտէորայ մ'է Գրական փորձերու մանաւանդ Առաջաբանն։ Հոն ալ գտող մը հանդիսացաւ Մինաս Չերազ, Մինաս Գսաւ Վիպականութիւնն առ մեզ։ Այլ ի՞նչ է վիպականութիւնն, որուն վրայ այնքան խօսուեցաւ եւ դեռ կը խօսուի, որուն վրայ այնքան տարբեր կը խօսուի յաւէտ։ Փոխանակ սահմանելու վիպականութիւնն, ես ձեզ պիտ' ըսեմ, Պարոնայք։ Վիպականութիւնն՝ Գրական փորձերու Առաջաբանն է։ Չես վերժաներ, այլ կը շօշափես այդ կարկառուն ու կենդանի արտայայտութիւնն հեղինակին մօտաց եւ զգացմանց։ Կ'ելեւէջեն շողարձակ տողերն, որպէս լանջքն սպիտակ՝ յորժամ կը տրոփէ սիրտն։ Որպէս ալիք յարաշարժ ծովուն, կ'ուռին ու կը խոնարհին, յարաժամ յուզեալ հողովին պարբերութիւնք։ Փաստերն, ոյք պատասխանիք են նախատեսեալ քննադատութեանց, իրրեւ վիրգք կը սլանան՝ ակօսելով օդն, ակօսելով իմացականութիւնն։ Ի մի բան, մարմին մ'է զոր ունիս յանդիման աչացդ, մարմին՝ ստեղծողի կամ հրաշակերտողի մատամբ կազմեալ, մկրտուած ելեկտրալուսիկ երկնալիճ առողանի մը մէջ, ծիր կաթինին աստեղանոծ կաթնահոսութեամբ օծուած։ Եւ երակք՝ ոյք կ'օձապտուտին այն տենչասպիտակ մորթոյն ներքեւ՝ լցուած են գոգցես արեամբ հրեշապկաց հրափետուր դասապետին զոր իւր նոր ստեղծուած ոյն ի սէր՝ Արարիչն յօժարակամ զենած է, յետ զենլոյն արրուցանելոյ երկնարեւելեան վարդից ոգին վերսնուրբ։ Այս տպաւորութիւնն ահա կամ սյսգունակ տպաւորութիւն մը

յառաջ կը բերէ մարդոյն վրայ (հիանալու կարողութենէն ոչ անմասն մարդոյն) Գրական փորձերու Առաջաքանն, ամենափայլուն վիպական գրութիւնն արդի հայ գրականութեան մէջ։ Այժմ դուք կրնաք սահմանել վիպականութիւնն եւ քսել. — Լեզուն պատկերազարդեալ, լեզուն մարմնաւորեալ եւ ոգեւորեալ, լեզուն գունեղ ու համեղ, լուսաւէտ ու դաշնակաւէտ, ահա վիպականութիւնն։ Ահա Ֆռանսական գրականութեան մէջ Վիգդու Իւկոյի գործն. ահա Մինաս Զերազի գործն, ահա Մինաս Զերազի գիւտն ալ հայ գրականութեան մէջ։

Այդ գտողին մաղթենք կեանք երկար ու երանաւէտ։
Կեցցէ՛ Մինաս Զերազ։

Ե.

ՎՍԵՄ ՈՒՆՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Նիս Թ. Ազգային Երեսփոխանական ժողովոյ

16 Դեկտեմբեր 1888

Մայր Դիւանը ժողովին հաղորդեց Ս. Պատրիարք Հօր հետեւեալ նամակն.

«Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

«Գոհութեամբ սրտի կը ծանուցանեմք պատկառելի ժողովոյդ՝ Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ վերանորոգումն, որ այրած էր մասամբ թաղին վերջին աղիտաւից հրկիզութեան միջոցին։ ՈՒՆՃԵԱՆ ԵՐԿՈՒՔԻՆ ՀԱՐԱԶՍՏՔ, ՎՍԵՄ. ՄԱԹՈՒՍ ԵՒ ԱԲԻԿ ԷՖԷՆՏԻՔ, իրենց ծանուցեալ քրիստոնէական ջերմառաւելութեամբ յօժարաւորութ. ստանձնեցին սոյն նորոգութիւնը զուարթառատ նպաստիւք յանձնձեւով բովանդակ ծախքն, եւ հոյակապ քան զառաջինն յարդարելով այրացաւեր տաճարն Աստուծոյ ի յիշատակ իւրեանց հոգեւոյս ծնողաց։ Ինչպէս պարտ եւ արժան էր, փութացինք մենք արդէն Ազգ. Վարչութեան շնորհակալեաց հետ

նաեւ մեր հայրական օրհնութիւններն յատուկ կոնդակաւ հաղորդել առ Աստուածասէր հարազատս Ունճեան, եւ աներկմիտ եմք որ ի լուր այս բարեգործութեան, մեծ գոհութիւն պիտի զգայ նաեւ Ազգային երեսփ. Ժողովդ որ քաջ գիտէ կռել այսպիսի առաքինական դործերու արժէքն եւ քաջալեր հանդիսանալ անոնց :

Մնամք աղօթարար

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Կ. Պոլսոյ

Անճեապէս եփ. — Ազգին եւ Ժողովոյս պարտականութիւնն է շնորհակալութեան քուէ տալ ամեն այն անձնաւորութեանց որք ազգային բարերար կը հանդիսանան. ուստի երբ Վարչութիւնն ու Ս. Պատրիարքն Վսեմ Ունճեան եղբարց բարեգործութիւնն ի պաշտօնէ կը հաղորդեն Ժողովոյս, երեսփոխանութիւնն յոտնկայս պէտք է իւր շնորհակալութեան քուէովն հռչակէ յիշեալ տեարց այս պանծալի գործն :

Ժողովականք յոտնկայս շնորհակալութեան քուէ տուին առ Վսեմ. Ունճեան եղբարս եւ Ամեն. Ս. Նախագահն յատենի Ժողովոյ յայտնելով Ազգին երախտագիտութիւնն առ յիշեալ բարերարս, հանգիստ մաղթեց նոցա ննջեցելոց հոգւոյն եւ մաղթեց որ Մաթուս եւ Արիկ էֆէնտիք երկար կենօք ապրին եւ կարենան փայլիլ սոյն օրինակ բարեգործութիւններով որոց մեծ պէտք ունի, ըսաւ, մեր բազմակարօտ Ազգ :

Վսեմ. Յ. Նուրեսան եփ. — Մաղթենք միանգամայն որ Ունճեան հարազատից այս բարեգործութիւնն օրինակ լինի Ազգին ուրիշ մեծատանց :

ՀԱՅԿ ԱՐՇԱԿ

(Աղջկան ձ' օրագիրն)

1 Յունուար 1889. — Տարի մ' ալ անցաւ . . . : Դիպուածն այնպէս տրամադրած է զի երկրորդ վանկն անցանէջ բացի կատարեալին՝ առանձին բառ մ'ըլլայ, նշանակութիւն ունե-

նայ առանձին . եւ այդ նշանակութիւնն այնքան համապատասխան ըլլայ մեր հոգւոյ վիճակին՝ երբ կարտատանենք մահաշջուկ այն անցեալ կատարեալն — ունցնալ :

Տարի մ' ալ անցաւ : Գարուն մ' ալ անցաւ մեր ոտից տակէն . ամալիկ մ' ալ՝ վարդագոյն ամպ մը ժպտուն՝ անյաւ մեր գլխոյն վրայէն . ճառագայթ մ' ալ անցաւ մեր հոգւոյն ընդմէջէն . ծիծառնիկ մ' ալ անցաւ մեր սրտին մօտիկէն — այնքան մօտիկէն , որ՝ թուի՝ բան մ' ունէր մեր լանջաց տակ դնելու կամ թէ բազմանք ունէր բռնիկն հոն հաստատելու : Անցաւ գարունն , անցաւ ամալիկն . անցաւ թռչնիկն՝ որոյ թեւքն հոգոյն կը դառնան ու հոգ կը դառնան . եւ անցաւ ճառագայթն որ յերկնից իջաւ եւ յերկինս կը վերագառնայ : Անցաւ , անցաւ :

Կը լսեն արձագանգն , նուրանիւ . Յաւ , ցաւ կը ցաւինք արդարեւ , քանզի անձնիւր անհատի համար , բարէ , համուռած են ոսկի գարուններն եւ վարդ ամպերն եւ աւետաբեր թռչուններն եւ առուգաբեր ճառագայթներն , ոյք անհամար անսպառ են ի տիեզերս : — Օր մը , մանուկ էինք , կը յիշես , նսեմաստուեր սենեկի մը մէջ՝ որպէս եղաւ ասլա մեր պիտուն՝ արեգակն ճառագայթ մը բռնեցինք , որպէս թիթեռնիկներ կը բռնէինք արփաւէտ դրախտին մէջ : « Բաշէ » կը գոչէինք միարան միմեանց : Քանի՜ որ ճառագայթին ծայրն ունէինք , կրնայինք ունենալ բովանդակ ճառագայթն : Այսպէս կը խորհէինք մեր մատաղ միամիտ իմացականութեամբ : Եւ ջլածիգ ձեռք երբ վար կը քաշէինք երկնից լուսեղինիկ թեւն , անհամբեր աչօք մկրատ կը փնտռէինք մեր շուրջ . ո՛հ , նոյնհետայն պիտի փոխէինք մեր զգեստուց ու կահուց բոլոր ժապաւէններն , նոցա փոխան ճառագայթի կտորներ կցելով մեր գլխանոցին ու մեր գլխու բարձին . մանաւանդ պիտի կտրտէինք երկնածիգ ճառագայթն , եւ լուսախիտ մէյ մէկ խուրձ պիտի կազմէինք՝ զոր մեր վարսից պիտի փոխանակէինք մեր գլխոյն վրայ : Իսկ ի՞նչ արդեօք պիտի տեսնէինք ճառագայթին արմատին վրայ , յորժամ լուսամուտէն երեւէր այն հոսկ ապա . թերեւս վարդ մը , արփածին լուսավարդ մը՝ մշտակարմիր մշտաբոյր : Բայց ինչպէ՞ս երկուքս միանգա-

մայն պիտի կրնայինք կրել միակ վարդն. հրաշալի մեր միտքն որ արիւնի ճաճանչ մը սեփականելու կարօղ կը կացուցանէր զմեզ՝ անկարօղ գտաւ. լուծել այս կնճիռն. եւ երբ բացինք մեր փոքրիկ ձեռքերն, ոչինչ գտանք հոն, աւաղ. ճառագայթն արդէն յոյժ հեռու էր մենէ, հեռու հորիզոնէն:

Այսպէս, կարծէինք թէ Հայկն ի մեզ ունինք, եւ կը խորհէինք թէ ինչպէս երկուքս միանգամայն պիտի կրնայինք մեր գրկին մէջ սեղմել Հայկն. եւ երբ մեր շուրջ նայեցանք, ո՛չ եւս էր Հայկն... Հայկ, Հայկ... Եւ այն սեւ օրէն ի վեր, այդ անուռն եւեթ կարտասանենք եւ կը լսենք, այդ ձայնն եւեթ — Հայկ, Հայկ: Ա՛հ, թող կապտուէր երկինք իւր կապտտէն եւ իւր բոլոր շողերէն կաթնագոյն ու վարդագոյն. թող առ յաւէտ գօսանար երկրի գարունն եւ անտի հեռանար սոխակն անդարձ. թող այլ մթնոլորտից մէջ գնային օդային ոգիք շնչել իրենց քաղցր շունչն՝ որ կ'որորէ հոգին հեշտագին. թող անապատ դառնար աշխարհ, եւ Հայկն հոն մնար: Հայկ կարօղ էր ծածկել, Հայկ կարօղ էր ծաղիկեցնելանապատն. չքնաղաքեղ բնութիւնն անկարօղ է մոռցնել Հայկն, անկարող է փոխանակել այն էակին որոյ գեղովն իսկ կը գեղանար գոգցես եւ ինք, մանաւանդ աչաց գեղովն Հայկին: Այն աչքն, այն սեւ աչքերն, քերորի մը յարաշարժ թեւոց ստուերն յայնոսիկ կ'անդրադառնար անշուշտ, ստուեր որ կը շողայ, որ կը դողդողայ, որ կը խոկայ՝ յանկուցիչ ու պակուցիչ համանգամայն. շող ու մռայլ անասիկ՝ ոյք կազմուին անհետազօտ հիւլէներովն անհուն անիրանալի տենչանաց: Աչքերէն կը բլխէր իր ձայնն. եւ հոսանուտ ինչ կ'ըլլար այն, որ յանգագայս կը թափանցէր՝ մեր մարմնոյն բոլոր ծակտիքներէն՝ մինչեւ հոգին մեր ներքնագոյն, զոր կը լցուցանէր նշուլագոյց մթութեամբքն ականողեաց: Եւ զի կը խօսէր մանաւանդ աչօքն, իր բանք սուղ էին հանգոյն փայլակին. եւ պարզ էին իր բանք հանգոյն իւր սրտին, ժպիտով կը կետադրէր իւր պարմերութիւններն, ականակով կը շէտէր զայնս, եւ կը խորագրէր եւ կը ստորագրէր սրտով ինչ որ կ'արտաբերէր իւր բերանն եւ ինչ որ կը տողէր ձեռքն: Իւր միավանկ անուռն, այո՛, կրկին ունէր նշանակութիւն. համայնից

համար Հայկ կը նշանակէր աչք, եւ համայնից համար սիրտ։ Աչք... Հայկ, Հայկ, այն սեւ աչքերդ : Պլպուլն ինքզինք կը թաքուցանէ թիւոց ներքեւ, քանզի տգեղ է մարմինն. է՛ր եւ դու մեծ ձեռքդ չէիր ծածկեր աչկունքդ, ոյք գեղեցիկ էին, գեղեցիկ էին, ո՛հ, որպէս ոչինչ է գեղեցիկ արարչութեան մէջ։ Նայուածոցդ հմայութեան ներքեւ կը խռովէր ու կը հիւժէր հոգին. ընդէ՛ր հայէիր, դու որ աղաւնեկի, դու որ հրեշտակի սիրտ ունէիր։

Գէթ ապրէիր, Հայկ. Բանգի այժմ որ ոչ եւս հայիս մեզ, այժմ որ հայիս այլուր եւ այլում, եւս առաւել կեղեքի մեր սիրտն, եւս առաւել տառապի մեր հոգին. Յորժամ հայէիր մեզ, մեր հալական հոգին կը զգար ինչ որ երանութիւնն է անշուշտ։ Բաց աչքերդ, Հայկ. բաց մեզ աչքերդ. Մեր արքայութեան դրունք եւ նոքա. բաց մեզ։

ՄԵԼԱՆԻԱ

ԱՂԱԽՆԵԱԿՆ

(ՎԻՊԱԿ)

Ա.

Էրիկը մեռեր էր. շատ աղքատ էր շուարեր մնացեր էր։ Եւ ահա Ըստամպօլէն՝ Էլպիսէն՝ զիր առաւ, քեֆ աղէկ տեղ մը կար, ուր՝ հոգ չէ՝ աղջկովը մէկտեղ խապուշ կ'ընէին ինքը։ Խօսեր, խալին կտպեր էր. թեզ թեզ ելլար զար, բախտին վրայ չի նստէր։

Փուլիկ՝ բնիկ զաւառին սէրն ունէր. եւ որովհետեւ իր զգացմանց շրջանակին մէջ կ'ուզէ առնել մարդ ամեն բան և այդ շրջանակէն դուրս մնալու յամառողին դէմ հակակրօնիւն, ատեղութիւն իսկ կ'ունենայ, այսպէս Փուլիկ կը մեղադրէր միշտ իւր հայրենակից կիներն որոնք կ'երթան Պօլիս, հոն տարիներով կը մնան, կու գան ու նորէն կ'երթան, ալ իրենց գեղին վրայ արհամարհանօք նայելով, հոնտեղի կեանքն ու հոնտեղի կեցօղներն իրենց ընկերութեան ալ ան։

արժան համարելով : Էլպիսը՝ որ դրացի էր իրեն, որուն բարիք կը կամենար, քանի անգամ դրեր դրեր վերցուցեր էր ինքնիրեն, որ աչքը դուրսն էր այնպէս, տուն տեղ թողուցեր, զաւկէն հեռացեր, զացեր զամուեր էր Ստամպօլ ու ալ չէր զատուեր հոնկէ :

Երբ Էլպիսին նամակն առաւ, բնագդմամբ սկսաւ քամահրանաց հեղեղն հոսել իր սրտէն. այլ կէս ճամբան կասեցաւ : Հիմայ չունէր ամուսին. և ամուսինը պարտքի տակ մեռեր էր՝ իւր երկար հիւանդութեան պատճառաւ. տո՛ւնը ձեռքէն պիտ'ելնէր : Այս մտածմանց մէջ Թուլիկ իւր բազկաց բոլոր ուժովն ու բոլոր առաձգութեամբ գրկեց մեծ սիւնն որուն՝ կրթնած մտիկ կ'ընէր Պօլսի գիրն : Հեռանալ այն տունէն, որ էրկանը նիւթական ներկայացուցիչն էր, որուն զամբն ու քարերը սուրբ էին իրեն համար : Պիտի էլնէր այն տունը ձեռքէն, ինքն ալ օտարին տունն՝ օտար երկրի վրայ՝ ան քիթիզ քիտեաֆի Ստամպօլցիներուն կամքին ու ֆեֆին գերի պիտ'ըլլար :

«Բեֆ աղէկ տեղ» կը գրէր Էլպիս : Բայց Էլպիս իր մտած տեղերէն որին վրայ աղէկ ըսած էր. աղան որ աղէկ ըլլար, հանրմը գէշ էր. հանրմն որ սիրտը բուխ ըլլար, աղան քար ապառաւ էր. աս տունը տղաք շատ կար, ան տունը կատու շատ կար. աս ընտանիքին հետ գիշերը լուսցնելու էր, ան ընտանիքին հետ արեւը գրեթէ նոր մարը մտած՝ անկողին մտնալու էր, — նստիլ իւր հաշուոյն աշխատիլ չըլլար, կազը փարայով է—. հոս յաւիտենական հիւանդ մը դարմանած էր, հոն յիմարի մը պահպանութեան կոչուած էր. աստեղ հախը կերած էին, անդին ամսականը կտրած էին, տանա անդին ստակը բանեցուցած ու տոկոս տուած չէին. տեղ մ'ալ լեցուն ու օրին ամսական տուած էին նէ, հոգին հսնած էին, հինգ հոգիի գործ ընել տուած էին : Աս ամենն Էլպիսին բերնէն իմացած էր : «Զիմ կրնար դուրս ելլալ» վճռեց :

Բայց գիրքն երկու երես ունի, ու երկուքն քի միասին չը կրնար կարդացուիլ : Քիչ մը վերջը միւս երեսն սկսաւ կարդալ : Յիշեց Թէ Էլլիսին առջի տեղն անանկ ակլուման տեղ մըն է եղեր քի, ալ տունին պէս է եղեր հոն : — Հիջ այրը սեչի չի կայ : Կղպանքի տակ բան չի կայ. քիւֆիւր կիւնան ընող. չախ մը տուօղ անգամ չի կայ. ամսագլխուն սողակգ ձեռքդ կը դնեն, հագուստդ կապուստդ նայելէն զատ. խզմեք որ ըսես, հիջի տեղ է, ամեն մարդ իր խզմեքը կ'ընէ. «չընենք նէ՝ հիւանդ կ'ըլլանք» կ'ըսեն. իրաւ ալ ադ տունին եշիկէն ներս հեֆիւս ոտք չէ դրած տանա : Հպարտութիւն հիջ չունին. աւա հասց հաշնալու ես : Տունին տղան ուսումնական է, շուկայէն ամեն իրիկուն տեսակ տեսակ լրագիրները կը բերէ, կերակուրէն ետեւ կը կարդայ՝ բարձր՝ որ ընտանիքը մտիկ ընէ. էվէլ զուարճալի բաները կը կարդայ որ խնդան. «Խնդալը մարտողական է» կ'ըսէ. շքիւն իշի գործդ լմնցու, գնա աղային լրագիրը մտիկ ըրէ : Ասանկ տեղ չըլլար. արբայութիւն է :

«Ըլլալէն ետքը՝ ասանկ տեղ մը ըլլար.» ըսաւ ինքնիրեն Ֆուլիկ, հրապուրուելով յիշողութեան իրեն ներկայացուցած այս ընտանեկան դրախտային պատկերէն : Իր բնագաւառին հզօր յարման յաղթէր, Թողուր Գուծպէլէքն. այս գոհողութիւնը շատ դժուարաւ պիտ'ընէր, այլ գոնէ՝ տեսիլ կնիկ՝ մարդու պէս տեղ մ'իյնար : Մեծ տեսն հիմայ իր աղջիկն էր, Բերուզը, հինգ տարեկան հրաշագեղ աղջիկ մը՝ որուն վրայ կը խենդենար մարիկը : Երբ տեսաւ աղջիկն, որք աղջիկն, աղւոր աղջիկն, որ եկաւ պլլուեցաւ մօրը ծնգաց ու աչք յարտասուս հարցուց Թէ քիչ էր Թուղմը որ այնքան իր մայրը կը յուզէր, երբ Ֆուլիկ տեսաւ Միածին դստրիկն, ինքզինքը մոռցաւ, այո՛, և խորհեցաւ Բերուզին վրայ : Չէր կրնար անկէ բաժնուիլ. ով որ ինքը ուզէր, աղջիկն ալ հետը մէկտեղ պիտի ուզէր. չէ նէ, անօթի կը մնար, յանձն կառնէր միւսնիլ աղջկան հետ, ու չէր աչքէն հեռացներ աղջիկը :

Հէգ կինն՝ իւր յուզման մէջ՝ մոռցած էր Պօլսոյ Թղթոյն բովանդակ պարունակութիւնն. ուստի նորէն կարդացնել տուաւ զայն Էլպիսին տղուն՝ որ դպրոցին յառաջադէմ աշակերտներէն էր, եւ որ յօժարութեամբ պիտի կարդար տաան անգամ մօրը կողմէն եկած գիր մը : Բարեկամուհին ոչ միայն կ'ըսէր Թէ աղջիկն ալ հետ կուգեն կոր, հապա նաեւ... — Ինչպէս ուշադրութիւն ըրած չէր այդ կէտին — հապա նաեւ Թէ՝ Էլպիս իր ելած տեղը, ան անչափ գոված տեղը պիտի զրկէր ինքը, այն տան մէջ՝ որոյ պատկերով գրաւուեցաւ Ֆուլիկ : Հիմայ որ յիշած էր Թէ զրացուհին մեծ գոհութեան անիծ ալ ունեցած էր ի Պօլիս, նամակին այդ կտորն ամենէն աւելի լաւ հասաւ իւր ականջին, իւր մտքին, իւր սրտին : Բայց ատանկ տեղ մը խենթ էր որ ձգէր էր Էլպիս : Հարկաւ զլխաւոր պատճառ մ'ունեցած էր, զլխաւոր պակասութիւն մը կար այդ տան մէջ : Ու Ֆուլիկ եւս քան զեւս ամիսփելով իր յիշողութիւնն, յիշեց՝ ամբաւ ուրախութեամբ և իբր յաղթանակաւ՝ Թէ առջի գտնուած տանն աղան (որմէ յանձունս գտն էր) իրմէ խօսք առած էր որ Եւրոպայէն ընտանեօք վերադարձին, հրքան աղէկ տեղ ալ գտնուէր սպասուհին, պիտի Թողուր եւ իրեն պիտի շարունակէր ծառայել : Ուստի, Էլպիս՝ որ խոստման զրփելու ոչ նիւթական ոչ բարոյական պատճառ ունէր՝ պարզապէս նոր դրախտէն հին դրախտը վերադարձած էր :

Ֆուլիկ որոշեց. «Երթանք, աղջիկս.» ըսաւ. «Ո՞ր, մարիկ, հայրիկին քով.» Տարաբանող աղջիկ, գոգցես նախազգացած էր իւր վաղահաս վախճանն. հայրիկին քով, տաս տարի յետոյ պիտ'երթար : «Ստամպոլ...» պատասխանեց անբացատրելի յուզմամբ Ֆուլիկ :

Բ

Վարդանեանց ընտանիքը չորս անդամէ կը բաղկանար. Հինգ տարիէ ի վեր ամուսնացեալ այր և կին մ'էին, որոնք

քառամեայ փոքրիկ աղջիկ մ'ունէին : Պետրոս Վարդանեանի մայրն ալ կենդանի էր դեռ. վաթսնամեայ կին մ'էր, քաջառոյգ՝ հակառակ իր մեծ հասակին : Կը պաշտուէր տան մէջ. այդ կեսուրն, այո՛, — հազուադէպ բան — իր հարսէն ալ կը պաշտուէր. նախ զի որքան խիստ այնքան ալ բարի, էապէս բարի կին մ'էր ինք. եւ ապա զի հարսն հեզաբարոյ, զերադրապէս հեզաբարոյ էր և որ յոյժ կը սիրէր իւր ամուսինն և ինչ որ իւր ամուսնոյն կը պատկանէր : Ուստի հարս ու կեսուրի կռիւ ալ չկար այս տան մէջ (էլ պիս մոռցած էր խօսիլ այս գնահատելի առաւելութեան վրայ, գնահատելի ըստ որում երկուց իզական կամաց ծառայօղ սպասուհւոյ կացութիւնն նախանձելի չէ յոյժ) : Պետրոս էֆէնտիի մայրն, որ հաւասարապէս կը սիրէր իւր որդին, հարսն ու Թոռնիկը, ասոնց ամենէն վեր կը սիրէր էակ մը՝ որ երբեք երբեք կ'երեւէր այդ երանաբոյր յարկին ներքեւ : Վեշտասանամեայ պատանեակ մ'էր այն, որ՝ ալիքն ու խորշումքն ի բաց առեալ՝ այնպէս կը նմանէր մայր Պետրոսեանին որպէս ջրոյ կաթիլ մը այլ կաթիլի մը կը նմանի : Իւր Հասգիւղ բնակող աղջկան զաւակն էր. այդ Թոռան նկատմամբ իր արտաքոյ կարգի սէրն անշուշտ կը բացատրուի հանիին ու Թոռան միջեւ այն նշանաւոր դիմագծական նմանութեամբ, և այնո՛ւ զի — որպէս կ'ըսեն — մեծ մայրերն իրենց աղջկանց զաւակներն աւելի կը սիրեն քան իրենց մանչերուն : Հանին, որ տարւոյն կէսն աղջկան ու միւս կէսը մանչուն քով կ'անցընէր, կը հրապուրէր Թոռն՝ երբ Գատըզիւղ երթար իր սոգուն քով : Ամբիս երկու երեք անգամ Առնակ կ'երթար տեսնել մեծ մայրն, որ ինքնիրմէն դուրս կ'եղնէր ի տես իւր սիրական Թոռան. այն իրիկունը սեղանին վրայ խմոր կար, գիշերը խրախճանք ու փայփայանք, առտուան նախաճաշին կաթին հետ պատուականազոյն մեղր ու մանանայ — որ զաւառներէն նուէր կուգար Վարդանեանին, — ու յետոյ համբոյր, դարձեալ համբոյր :

ու սիրական թողան գրպանը կը սահեցնէր ջիլ ջիլ ստակներ ու կը ճամբէր թողնիկը՝ մինչև դուռն ետեւէն երթալով ու մինչև փողոցին անկեանը դարձն անոր նայելով անյազ : Առնակ տուն երթալէ , վարժարան երթալէ յառաջ , Բերա կ'երթար . . . :

Մի գայեակդիք : Առնակ Եիքսէք-Գալտըրըմէն վեր ելնելով Բերա երթալու ճամբուն վրայ երկու տեղ կը հանդիպէր. նախ Արաւնազդին գրատունը կամ բուն բառով կըրպակը. — Արաւնազդ կոչուած այն տարօրինակ Յոյն գրափաճառը ծանօթ է գրասէր հասարակութեան : Արամազդի վրայ կ'երդնու, և Լուի Գաղտզի գերեզմանին վրայ պիտի գոչէր՝ «Միայն Արամազդ է մեծ:» Երկրորդ կայքն էր նոյնպէս Յոյն գրափաճառի մը կրպակն , որ Արաւնազդի կոկիկ գրանոցին քով՝ աւերեալ քաղաքի մը տպաւորութիւնն յառաջ կը բերէր մարդուս վրայ . կազմալոյծ , քայքայեալ , բորբոսացեալ, այլագունեալ հին գիրքեր, հին թուականաւ ընդհանրապէս ու հին գործածութեամբ հանապազ, տարտըղնած կան, տխրադէմ, փոշոյ խաւերուն տակ աղօտացեալ, և ւախտացեալ . . . քանզի թոքախտով կամ անանուն ախտերով վարակեալ անձինք՝ ապրելէ յուսահատ եւ աղքատ՝ տարած ծախած են հնափաճառին իրենց սիրելի գիրքերն, իրենց առողջութեան ու երանութեան աւուրց անբարբառ անագորոյն վկայներն . և կամ իրենց կենդանութեան ժամանակ՝ այդ պատուական առարկաներէն անբաժան են մնացած , եւ յետ մահուան իւրեանց՝ իբրեւ տարափոխութեան միջոց՝ փաճառուած են այդ առարկայք նոր տերանց կողմանէ : Վնյ աչացն ոյք պիտի ծարձափին այդ աւերակաց մէջ՝ ի խնդիր գաղափարաց, ի խնդիր ծանօթութեանց, ի խնդիր գեղեցկին ու ճշմարտին — որոնք կը թանձրանան հին ու նոր գրեւոյն մէջ : Առնակին աչքերն , հրափառ աչկունք Առնակին , սկսած էին ծափիլ ոյժէ ու հուրէ — Թէև ոչ հմայքէ . Տարիէ մ'ի վեր է սորված էր

Ղալաթա-Բերայի հին զրավածառներու ճամբան, և հանիին երկիւղածօրէն պահած հին փայլուն արծաթ և ոսկի զրամներն՝ ինչպէս ժամուցը քահանային կը տրուի՝ երկիւղածօրէն ու յօծարակամ կը ձգէր Արամազդին ու Քնարին ձեռք (վերի Յոյնը Քնար կը կոչուէր ոմանց կողմէն, որովհետեւ միշտ ծախու քնար կամ քանի մը քնար կ'ախտւած կար իր զրքերուն վրայ) : Առնակ մինչեւ Պօտէնին երթար, որ իր ուղւոյն վրայ վերջին հնավածառն էր գրոց, զրպանն արդէն պարպուած կ'ըլլար, շոգենաւին ստակն իսկ մերձ՝ հաշիւը բոլորելու համար՝ տալով Արամազդին ու Քնարին : Եւ այն ատեն՝ պապա տապան Հասգիւղ կ'երթար Առնակ, ճամբան քանիցս հաճոյիւք յեղեղելով այս պապա տապան բառը, զոր ժողովրդեան բառարանէն էր քաղած և զոր՝ իբրեւ ճշմարիտ զաւակ մեր ռամկավարական դարուն՝ կը սիրէր ինչպէս ամեն բան որ ժողովրդեան կը պատկանի : Եթէ հանին գիտնար, գիտնար որ իր գիրգ թռն՝ որուն վրայ կը զուրգուրար՝ ոտքով Բերայէն մինչեւ Հալլնք-Օղլու կ'երթար, և բեռնաւորեալ հին զրքերով՝ որոց հնութիւնն ալ կ'աւելցնէր իրենց ծանրութիւնը :

Այս քառանգամ կամ հնգանգամ երանեալ ընտանեաց պիտի ծառայէր Փուլիկ : Դիւրին էր անշուշտ աշխատութիւնն, որու վրայ զաղափար տուած էր արդէն Էլպիս : Միայն թէ աշխատութիւնն հոս նոր եղանակաւ մը պիտի կատարուէր, արդարեւ նոյն բազուկներն ու նոյն սրունքներն ունէր ինչ որ ի Գուծպէլէկ, բայց հոս ուրիշին հրահանգովը պիտի շարժէր. ու պիտի շարժէր, պիտի՝ աշխատէր մայրաքաղաքի կանոնաւոր տան մը զրուծեմուն համաձայն : Այլ մտաւոր բոլոր կարողութիւններն ամփոփեց եւ յաղթեց դժուարութեանց . որովհետեւ ինքն ալ յաղթուած էր ան սէրէն զոր իւր անջկուն կը յայտնէին առհասարակ տանուտեարք : Մայր Վարդանեան՝ կ'աշխատցնէր Բերուզիկն, այլ խնայելով մատաղ հասակին : Տիկին Վարդանեան հրեշ-

տակային այն մանկամարդ կինն՝ որ կանուխ հօրէ որբ մնացած էր ինքն ալ, կը խանդաղատէր սպասուհւոյն աղջկան վրայ, իր զաւակին հետ զայն ալ կը համբուրէր, անոր մագերն ալ կը տանտրէր, և անոր ալ ա թ գ կ'ուսուցանէր իր Բերուզիկին հետ : Տ. Վարդանեան, որ ռամկավարական զաղափարներով կամ մանուսանդ զգացմամբք համակեալ երիտասարդ մ'էր, զոհ էր իր կնոջ այս գորովանքէն առ աղախնեակն. յոյժ պիտի վիրաւորուէր, եթէ իր կինը ժողովրդեան այդ հէգ զաւակին հետ անգմօրէն վարուէր, որպէս կանայք ընդհանրապէս կը վարուին՝ իրենցմէ ուրիշ արզանդի ծննդոց հետ, երբ մանուսանդ իրենցմէ վար դասու պատկանին անոնք :

Միայն թէ, փոքրիկ տիրուհին ու փոքրիկ սպասուհին նոյն անունն ունէին, ինչ որ շխտութեան պատճառ կ'ըլլար-Հարկ էր փոխել միոյն անունն. և արդէն ընտանեաց մէջ կար մէկն, ընտանեաց այցելու անդամ մը (եթէ կրնանք այսպէս բացատրել) որ վերամկրտած էր Յուլիկին դստրիկն. Առնակ, որ այն տարին Պայրըն կը կարդար և որ մեծ բանաստեղծին աղջկան պատկերին ու Գուժպէլէկի փոքրիկ գեղջուհւոյն դիմաց միջեւ զարմանալի, ներքին նմանութիւն մը նշմարած էր, Ատա կ'անուանէր սպասուհւոյն աղջիկն : Եւ այդ անունը մնաց սպասուհւոյն աղջկան :

Գ.

Առնակ, այժմ, աւելի յաճախ կ'երթար Գատըքէոյ և աւանակ կը հեռանար մօրեղբօրը տունէն : Երբ հանին Հասգիւղ իւր աղջկան տունն երթար կենալ, Թողը դարձեալ կը յաճախէր մօրեղբօրը տունը : Մայրն, որ զաւակին գիշեր դուրս կենալուն դէմ էր սկզբամբ թէ մայրական գորովանօք, և որ ակամայ կը Թողուր զաւակն հանիին երթալ ի Գատըքէոյ, կը յանդիմանէր հիմայ տղան՝ որ սիրելի հանիին իրենց հիւր եղած տտեն ալ կը բացակայէր տունէն : Առնակ՝ որպէս հա-

նիին սիրական թողն՝ նոյնպէս ալ իր մօր սիրական զաւակն էր։ Այդ տարաբաղդ մայրն՝ իր երկու զաւակներն հողը դրած էր, և անոնց մահուանէն յետոյ — որպէս կը պատահի ընդհանրապէս մարց — կենդանի զաւակն՝ իր նախասիրեալ զաւակն՝ աչքէն ելած էր։ Առնակ նոյն իսկ լսած էր քանիցս իւր մօր բերնէն. «Աստուած աղէկները կ'առնէ, դուն երթալու չէիր եղբայրներուդ տեղ։» Զգայուն պատանին, որքան ալ սիրէր իւր եղբայրներն, առանց վշտի չէր կրնար լսել մօր մը բերնէն այս խօսքերն։ Եւ այդ բանից տպաւորութիւնն այնքան խորին, այնքան աղիտաբեր եղաւ իրեն, մինչ զի յետ այնորիկ — հնգետասնամեայ հասակէն յետոյ — չունեցաւ իւր հասակին յատուկ պայծառ ամբողջական այն զուարթութիւններէն, անշուշտ բնական տրամադրութեան մ'ալ օգնութեամբ։

Առնակի մայրն, այո՛, բոլոր զաւակաց մէջէն յաւետ ամենէն աւելի կը սիրէր Միշին զաւակն՝ որքան ալ խոշտանգէր զայն միշտ։ Անոր բացակայութեան զիշերն հանգիստ քուն չէր քնանար։ Մեծ մօր՝ տան մէջ ներկայութեան միջոցին իւր որդւոյն իւր սովորութեան հակառակ բացակայութիւնն անբացատրելի կը թուէր իրեն. և՛ հիմայ՝ սովորական անհանգստութիւն մը չէ որ կը զգար, երբ տղան Գատըղիւղ անցընէր զիշերը. ճշմարիտ մտատանջութեան մ'էր մատնուած։ Կը կասկածէր։ Սրդեօք տղան բնն մը ունէր Գատըղէօյ. մօրեղբօր տունն յաճախող ընտանեաց մէջէն կամ դրացուհեաց մէջէն սիրտ տուած էր արդեօք մէկուն. կամ թէ նոյն իսկ... իւր մօրեղբօր կնոջն էր կապուած, վասնզի «աս դարուն տղաքը մեր գիտցածներէն չեն»։ Կամ թէ, ո՞վ գիտէ, զիշերները Բերան կ'անցունէր՝ ցոփութեան ընկերներու հետ զօրս աստ անդ գտած էր։ Վերջին կասկածն ամենէն շուտ փարատեցաւ, ստուգելով որ բացակայութեան զիշերները միշտ Գատըղէօյ գացած է։ Միւս կասկածներն ինչպէս փարատել. զաղտնի համակրութիւն մը կրնար գոյանալ և ար-

ծաթծիլ Վարդանեանց հետ յարաբերութիւնս ունեցող պատուա-
նուհւոյ մ' եւ Առնակին միջեւ. նոյնպէս կրնար Առնակ խան-
դավառիլ հետգհետէ Տիկին Վարդանեանի համար, որ ոչ
զրգռիչ այլ հրապուրիչ կին մ'էր. եւ քննութեմէ կրնան վը-
րիպիլ այսպիսի յարումներ: Այս կասկածանք կը կրծէին ու
կը կրծէին Տիկին Բրաբիոնի սիրտն: Ոչ կուզէր յայտնապէս
արգիլել տղուն այցելութիւններն ի Փատըքէոյ, եւ ոչ կ'ուզէր
սակայն որ տղան բացակայի տունէն:

Առնակ կիրակի առտու կանուխ կ'ելնէր, երկուշաբթուան
դասերը կը պատրաստէր, գրպանը զիրք մը կը զնէր ու
ճամբայ կ'ելնէր: Հասգիւղի շոգենաւուց յամրութիւնն եւս
քան զեւս զգալի կ'ըլլար իրեն. թէեւ ընթերցմամբ կ'անցու-
նէր այդ ուղեւորութեան ժամանակն, այլ ... անհամբեր էր
տեսնել Ատան: Կամուրջէն անդին նորէն շոգենաւ. նոյնպէս
Թանձր, դանդաղ շոգենաւ, այլ շոգենաւն ոչ ուրեք պիտի
կասէր զէթ. այնուհետեւ մարմարեայ պալատներ պիտ'ող-
ջունէր, Գըզ-Գուլեսիի սպիտակութեամբ պիտի շահար, եր-
կու հոտանքներու մէջտեղ պիտի թրթռար: Լայն ծովու վրա-
յէն նաւարկելով, երկու փարոսներուն մէջէն կամ ի տես եր-
կու փարոսներու՝ որոնք ցերեկն ալ կը փայլին՝ ընթեռնելով,
երազելով, խոկելով, պիտ'երթար Մօտա, պիտ'երթար պեւ-
նել, — զո՛վ, — աղջիկ մը վեցամեայ, էակ մ'որ բուսոյ կե-
նօք դեռ կ'ապրի:

Մայրը լաւ որակած էր իր զաւակը, «դարու զաւակ»
կոչելով Առնակն: Էր արդարեւ դարուս զաւակն՝ Հասգիւղի
Ա. Ներսիսեան վարժարանին այն ուսանողն, որ Ներսէս
Վարժապետեանի ծունկը փաթեցած էր աղերսելով. «Զիս
վարդապետ ըրէ, Հայր»: Պայրընին ընթերցումն նոր աւար-
տած էր յայնժամ Առնակ, եւ նոր լրացուցած իր կենաց
վեջտասաներորդ տարին: Կրօնական կամ վանական կենաց
ինչ բան կը դրդէր այդ պատանին. անիծից կամ մանաւանդ
օրհնութեան արդիւնք էր այս՝ որպէս պիտ'ըսէինք համիկ

մտածմամբ, կամ բարեպաշտական մտածմամբ. կամ զիտական տեսակէտով, պիտ' ըսենք թէ ժառանգականութեամբ Առնակ ունէր այդ տրամադրութիւնն : Անտարակոյս ժառանգական օրինաց մեծ է զերն : Առհաւութեամբ էր որ Առնակայ հոգին հիւանդ էր, իր հաւերէն մին ի ծնէ մարդաստեաց մ'եղած էր՝ տենդալի սիրահարութեան շրջանաց յաջորդութեամբ, ուրիշ հաւ մը ամուսնացեալ՝ օր մը տան մէկ սենեկին մէջ առանձնացած, սուրբ գիրքերէ շրջապատուած, մերժած էր ուրիշ անունդ բաց ի ձիւնապտուղով չոր հացէ, եւ ժամանակ մ'այս կեանքն էր վարած : Առնակի պարագայն պարզ չէ. իր հաւերէն կ'առնէ եւ անոնց վրայ կ'աւելցնէ. վանական կենաց տրամադրութիւն, ճաշակում սրբազան մատենագրաց, և անզուսպ սէր առ Պայրն, խանդավառ ընթերցում գարուս այն մեծ անառակին մատենագրութեանց, յարում հնութեան, ամենահնութեան, չերօ՛ համակրութիւն միանգամայն ամենայնի որ խկապէս ու ճշմարտապէս նոր է. մահու չափ սէր տոգոյն էակի մը որ վաղամեռ եղած է, ներսխեան վարժարանին մէկ աշակերտուհւոյն՝ զոր եկեղեցւոյ մէջ միայն տեսած է, եւ ահա սէր մը — քանզի Առնակ Ատայի համար կը զգար ճշմարիտ սէր, — ահա սէր մը տարօրինակ՝ եթէ կայ : Տիկին Բրաբիոնի կասկածներէն որքան հեռու կը գտնուինք : Առնակի մայրն յաւակնութիւն ունէր խելացիի, եւ իրօք ալ էր խելացի. սակայն իր խելքն որքան հասարակ, որքան անձուկ էր հասկնալու համար իւր որդին : Ըսել չէ թէ՛ սակայն՝ Առնակ չիրացուց ապա բնաւին իր մօր կասկածներն :

Դ

Վարդանեան տան մէկ սենեակը բոյրովին պարապ էր, ուրիշ մ'ալ զրեթէ : Ուստի նիւթական արգելք մը չը կար որ Վարդանեան իր տան մէջ ընդունէր քոյրն, որ որբուարի կը մնար ամուսնոյն յանկարծական մահուամբ : Առնակ բա-

րեբաղդաբար դպրոցէն ելած էր և փաստաբանի մը սենեակը կ'աշխատէր չորս ոսկի ամսականաւ : Կրնար ապրեցնել իւր մայրն եւ ինքզինքն, — այն պայմանաւ սակայն որ Արամազդին ու Քնարին կրպակին առջեւէն չանցնէր : Եւ արդարեւ, չափաւորեց իւր զրամոլութիւնն, եւ հաստատուեցան՝ մօրն հետ՝ իր մօրեղբօր տան մէջ :

Ի Գատըքէօյ բնակութեան առաջին օրը տեսայ այդ պատանին, որուն ամենէն աւելի համակրած էի եւ որ ինձ կը խօսէր ինչ որ իւր առանձին խցիկին որմոց միայն կը խօսի կամ չը խօսիր իսկ մարդ : Առնակ, իւր հօր մահուանէն հազիւ ամիս մը յետոյ, դեռ աչքերը ծաց, դեռ զգեստը սև ու սիրտը ծաղծալից, ըսաւ ինձ զիշեր մը ի Մօտս-Պուռնի, ուր այնուհետեւ այնքան յաճախ իրարու կը հանդըպէինք, ըսաւ առանց շրջաբանութեան, առանց պատիւպատ ձեւերու, ըսաւ անաթօղ, կոշտ, վայրենի կերպով, այլ շեշտով մը՝ որ տաճարի վարագոյրին պատուելու ձայնին պէս եղերերգական էր եւ ահաբեկիչ, ըսաւ ինձ Առնակ՝ հոգւոյս խորը նայելով անպատմօրէն սեւեռուն աչօք. « Հօրս մահը նախահիմարեալ էր : » Բոլոր երկրագնդիս կապարներն այդ բառեակ բառերով նախադասութեան մէջ պաղած ու ծանրացած էին զոգցես. յետոս ընկրկեցայ յանգզայս : Յարեց Առնակ, սոսկալի կերպիւ սառնական արտասանութեամբ յաւէտ. « Չը պիտի կրնայինք՝ առանց հօրս մահուան՝ միանալ մօրեղբօրս հետ : » Կռնակս գտնուած ծառին բունին վրայ ինկայ քան կրթնեցայ ծառի բունին : Ու դողալով՝ որպէս չեմ տեսած մահկանացուի դողալ, ու լայնալով ու բարձրանալով յայտնապէս, նիւթապէս, գերբնապէս, և այդ դողազին անլուր ընդլայնամբ աչքէս ծածկելով հրուանդանն ու համայն տիեզերքն, աղաղակեց ձայնով մը՝ ծաւալով ահագին՝ այլ որ լուռութեան չափ գրեթէ անձուկ եւ լուռութեան չափ անսահման և ահաւոր էր. « Կը սիրեմ Ատան. պիտի սպաննեմ զայն : » Եւ պարփակիչ ակնարկ մ'արձակեց

երկրի եւ երկնից. երկինք եւ երկիր փոքր էին այն հոգեւախտի անհասանելի կերպիւ անհուն աչաց համար :

Փակեց այնուհետեւ տենդաշող աչկունքն. ինձ ձգեց ձեռքըն, հծծելով միանգամայն. «Ա՛հ, Թեւանիճ, բռնէ ձեռքէս, ամբողջ իրանս ան թեւոցդ մէջ, քանզի պիտի հալիմ, պիտի հատնիմ. վայրկեան մ'եւս և զգայարանքդ պիտի վրիպիմ : » Նիհար, ցուրտ, զրեթէ դիակնացեալ մարմին մը ունէի՝ թեւոցս մէջ : Կէս զիշեր էր, ծովեզերքն ոչ ոք կար, փարօսը կը դառնար, ծովը կը քնանար : «Առնակ, աչքերդ բնց, տես լուսինն՝ որ կը շողայ : » — «Լուսինը կը շողայ. մեր հայրերն այդպէս կ'ըսէին, քանզի մեր հայրերուն աչաց՝ լուսինն արդարեւ կը շողար : Իսկ իմ, իսկ քու տպաւորութիւնդ իրօք այդ է միթէ : Քու տպաւորութիւնդ այն չէ՞ թէ՞ լուսինը կը տաղտկանայ. և ինչո՞ւ այնպէս չես ըսեր : Արեգակին լուսով միայն կրնայ շողալ լուսինը. Եւ ես արդէն խաւար կը տեսնեմ երկնից արեգակն ալ, որովհետեւ ներքին արեգակն, իմ ներքին արեգակս, եւրախաշական արեգակն՝ արդի հոգեբանութեան բառով՝ մարտծ է, աւանդ . . . : Առարկայն կ'ապրեցնէր մարդկութիւնն. առարկայն ոչ ևս է, և ենթակայն ո՛հ, տխուր, տխուր, տխուր է ենթակայն : Գոյումպոսէն ու Գալիլէոսէն մեծ պիտ' ըլլար այն մարդն, որ նորէն զտնէր, որ յայտնէր մեզ նորէն առարկայն : Ամենէն մեծ բժիշկն այն պիտ' ըլլար՝ որ զմեզ բժշկէր ներքնատեսութենէն, ինչ որ նոյն է՝ յուեատեսութենէն : Աչքն է որ սեղծեց արեգակն. այսպէս վճռեց Շաբէնհաուէր : Մինչեւ արեգակը, մինչեւ արեգակաց արեգակը, մինչեւ լուսոյն աղբիւրը, մինչեւ լուսոյն արարիչն հասաւ զգայապաշտական այս գերազոյն հայհոյանքն. և անհուն շունչ մը մրրկային՝ անցաւ տիեզերաց ջահին վրայ . . . Եւ այն սեւ օրէն ի վեր յռոտեսեւ է մարդկութիւնն... Արեւը խաւար կը տեսնեմ, լուսինը խաւար, արեգակը խաւար, խաւար ամեն ինչ և ամեն էակ . . . բայց միայն Ատան... Ա՛հ, Ատան, Ատան, Ստան . . . : »

Այս խորին յռետեղութեան ու տարօրինակ սիրոյ խառնուրդն, այդ տրտմագին տաղտուկը կեանքէն և այդ յիմարային կամ հիւանդագին յարումն ինչ բանի որ կեանքն ունի ամենէն թարմ, այդ ծերութիւնը մտքի և այդ առուգութիւնը սրտի, այդ տենչը մեղաւանդաց մեղեկեցութեան և այդ տենդն ընդարձակագոյն գործունէութեան, այդ վայրագ զգացում ծնողաց նկատմամբ և այդ փափկագոյն զգայութիւնն էակի մը համար՝ որ անուրջ մ'է քան մարմին եւ ոսկր, այնքան ներհակ ձգտումնք ինչպէս կրնային միանալ էակի մը վրայ. այնքան արագ ազդմունք ու հակազդմունք նրբա կազմ էակի մը վրայ՝ ինչպէս կրնային ապրեցնել զայն : Կը զարմանայի, և կը վախնայի. մանաւանդ այն գիշերուան յայտնութենէն, ջղային այն ծայրագոյն զրգուծենէն, այն բարձրագոյն զառանցանքէն յետոյ, կը վախնայի որ Շէլլիի քերթուածոց մէջէն ամենէն աւելի սիրածիս (') իրականութիւնը տեսնէի ամենասիրելի բարեկամիս վրայ :

ԹԵՆԱՆԻՑ

(') Julian and Maddalo, SHELLEY'S POETICAL WORKS.

Մ Ա Ն Ա Վ Ե Ա Ն

...իր արտաքինն ընաւ հրապոյր չունէր. անհոգ հագուած անյարդար կը թողուր իր մազերը. նիհար եւ այնչափ վտիտ էր որ անշուշտ կռուելով պրելով սպառած էր: Այսու ամենայնիւ՝ բաւ եւ շատ իսկ էր քիչ մը խառնել զնա, եւ ահա կը տեսնէիր այդ մաշած տաշուած մարդուն քով դիւրագորգիւ ըզգացումներ՝ որք հրեղէն հոսանքի պէս՝ ի դուրս կը յորդէին: Աչքէ անցնելով մեր հին պատուելիներու կեանքը, յորոց բազումք ծռելով ծռելով՝ մինչեւ անարգութեան ըստորնագոյն աստիճանը տարին Ազգ. վարժապետութիւնը, եւ տեսնելով զՏիգրան որ մինչեւ իր յետին եւ աւաղելի օրն ալ ոչ մէկուն առջեւ ծռեցաւ, մարդ յիրաւի իսկ կը զարմանար եւ մեծապէս գոհ կ'ըլլար, որ Մանավեան, կիւսով չափ հին դպրոցի ուսուցիչ, նոր եւ երիտասարդ ուսուցչաց ոմանց չունեցածն ունէր. անվախ բնաւորութիւն, իրաւանց վրէժխնդիր ոգի, քննադատելու, ծաղրելու եւ ճաղկելու եռանդն ու կարողութիւն:

Չծռեցաւ, այո՛, եւ սակայն քանիցս շղթայուած՝ խուլ մոնչիւններ նետած է իր թղթերուն վրայ, որք լոյս չտեսան, եւ քանիցս ունեցաւ հառաչանքներ իր կրծոց տակ խեղդուած: Նախորդ Ուում. Խորհրդոյ ծրագրին դէմ, Ազգ. թերթի մը մէջ, քննադատութիւններ գրեց: Յօդուածը խմբագրուած էր թէպէտ անխնամ ոճով, այլ ամեն էջ թաթխուած է դիւրագորով հօր մը եւ փորձ ուսուցչի մը շնչովն ու ոգւովը: «Եթէ բախտը կը զլանայ աղքատաց իր ոսկին, գէթ դու գթած եւ մի զրկեր զանոնք ուսման եւ գիտութեան քաղցրագոյն ճաշակէն եւ հաճոյքներէն, որք երկնառաք զուարթունքներ են՝ նոցա անողոք ճակատագիրն մասամբ իւրիւր հաշտութիւն ածելու»: Զաւակաց հայր ուսուցիչը, արգարակ ցասմանէ դրդեալ, կը խայթէ, սուր սլաքներ ալ կը թօթափէ: Տեղ մը մեր պաշտօնական ուսմանց յայտագիրը քրքրելով՝ Բոլովի Սայլին յիշատակութիւնը կ'ընէ եւ կ'ըսէ այսպէս. «Այս առակը շատ աղէկ կը

յարմարի մեր դաստիարակութեան խնդրոյն, զոր ագիտութիւնը դէպ ի խաւար տանիլ կուզէ, չահամուլութիւնը դէպի իւր արկղն, ակնկալութիւնը՝ դէպ ի իւր նպատակը:» Տիգրան կը ճանչէր մեր մեծ մարդոց տկարութիւնը, արիւթիւնը կըսեմ. գիտէր որ զժուարութեանց պիտի բաղխի, սպառնալիքներ պիտի լսէ: Եւ յիշաւի ալ, հազիւ թէ իր մէկ քննադատականը ի լոյս կեցնէր, հետեւեալ օր կանուխ պաշտօնական թուղթ մը, թոյնի մէջ թաթխուած, ղրկուած էր բարձր տեղ մը արտաքսել զնա իր մէկ վարժարանէն, երկրորդ օրն ալ պաշտօնական ազդարարութիւն ընդունեցաւ որ եթէ այդու չզգաստանար, պիտի արտաքսուէր Ազգ. բոլոր վարժարաններէ. Տիգրան, իբրեւ կուռոյ մարդ, ըսպառնալիքէ վախցող չէր. բայց արի՛ տես որ իր կենաց հետ մշտնջենապէս կապուած էին կին մը եւ վեց հատ արու զաւակներ. ուստի հացի սպառնալիքը Դամոկէսի սուրէն աւելի երկիւղալի էր իրեն բնականաբար, եւ ահա լոնց, ծռեցաւ այն երկաթի մարդն իր մանուկներուն առջեւ, եւ այնուհետեւ մեր հրապարակն եղած էր շոգեկառքի ժողովրդակոն թիւն, ուր Տիգրան իր քննադատութեան միացորդը կաւարտէր: Ա՛հ, հաց, կանիժէի զքեզ բոլոր ուժովս, եթէ ՔՐԻՍՏՈՍ ԻՐ ՄԱՐՍԻՆԸ քեզմով չչինէր:

Մանավեան չափով մը գրական ալ մարդ էր. Դայլ վահան անուն թատրերգութիւն մը գրած է, թէ եւ չտեսած եմ զայն. վարդաւն մըն ալ ունի, զոր տեսած եմ ի Ռոտտոթոյ: Որչափ կը յիշեմ, բաւական լաւ գործ մըն էր, Յովսէփ կաթողիկոս եւ Ղեւոնդ աղէկ նկարագրուած էին: Յօդուածներ գրած էր այլ եւ այլ ազգային խնդրոց համար. իր վերջին գրածն եղաւ ոտանաւոր մը՝ որ գրուած է յառաջիկայ տարուան օրացոյցին սկիզբը, եւ յօդուած մը, դառնութեամբ լի գրութիւն մը, յաւիտենական բողոք, որ անտիպ մնացած է, եւ զոր, ափսոս, չ'կրցի ձեռք ձգել: Անշուշտ օր մը լոյս կը տեսնէ. եւ վայ անոնց...: Շատ բան այսպէս է, ինչ որ կարելի չէ եղած հրատարակել ի կենդանութեան, մահը երեւան կը բերէ զայն: Արդ ասոնք մեծ գրական կեանք մը ենթադրեն կամ ոչ, սա յայտնի է որ

Մանավեան իբրեւ հայ ուսուցիչ բաւական ապրեցաւ, իսկ իբրեւ մարդ՝ վաղա՛մեռիկ գնաց. այլոց ուսուցանելու միշտ զբաղեալ՝ բնականաբար քիչ ժամանակ կ'ունենար իր զարգացմանը նուիրելու: Իր կեանքը պիտի ըլլայ եւ մերն ալ:

(Արեւելք)

ՀՐԱՆԴ

ԿԱՏՈՒԻ ՄԸ ՅԻՇԱԳԻՐԲ

ԿԱՆԱՅԲ ԵՒ ԱՐԲ

Ինասիյէ 1 Յունվար 1889

Նոր տարւոյն առաջին օրը գոհութեամբ անցուցի. Բերայի աղջկանց Արուեստանոցին մրցանակաբաշխութեան հանգիսին ներկայ գտնուեցայ, երգ ու խօսք լսեցի, թէեւ բաւական բաղաձայն էին երգերն ու խօսքերն, ինչ փոյթ, Բերա գործի տեղ է: Մեծ գործիչն հոն է. ամեն ոք անուանեց Վսեմ. Նուրեան էֆէնտին: Խօսքը գործքի հակառակ է, կ'ըսեն: Նախորդ վարչապետին կեանքն ազդու կերպիւ կը հերքէ այդ աստիճանն: Ոչ ոք աւելի կը խօսի քան Նուրեան էֆէնտի: Եւ միթէ խօսքին, գիրին արդիւնքը չէ՞ գործն ալ: Արհեստանոցի գաղափարը Մայսային մէջ չէ՞, այն հզօր գիրքն որուն վրայ ալ չը խօսուիր այս դիւրամուաց ժողովրդեան մէջ:

Արուեստանոցի առթիւ ուրքան ուրախ եմ որ Տիկին Մատակեան հրաժարեցաւ այդ հաստատութեան Տնօրէնութենէն: Եթէ Բերա մնար, Մանկապարտէզն ալ օգին մէջ պիտի մնար: Մանկապարտէզն հիմայ հողին վրայ է, Դատըգիւղի բերրի հողին վրայ, ուր այնքան ընտիր հաստատութիւնք կան արդէն կրթական: Ուրքան ջերմութեամբ կ'ուրախակցիմ այն ծնողաց, որ ենք իրենց տղաքը պարտէզ կը խրկեն՝ զըպրօց խրկելու տեղ: Դպրոցը պիտի մեռուցանէ մեր մանկու-

թիւնը. պարտէզին մէջ միայն կեանք կրնայ առնուլ այն : Ըստ աւանդութեան, մարդկութիւնը դրախտին մէջ կորսուեցաւ . ես կը հաւատամ որ դրախտին մէջ, մանկապարտէզին մէջ պիտի փրկուի մարդկութիւնն, — եթէ փրկուի պիտի երբեք : Շատեր շատերու համար կը գոչեն կեցցի : Եթէ ապրելու ամենէն աւելի արժանի մէկը կայ ինձ համար, այն ալ Տիկին Մատակեանն է, որ կեանք կամ նոր կեանք կուտայ մեր ազգային կրթութեան : Եւ Արուեստանոցն ու չինչ կորոյս Ռուսահայ պարսիգպանոյն հրաժարմամբ. չահեցաւ ընդհակառակն, մէկի տեղ այսօր ունի զոյգ տնօրինուհի : Տիկին Միրասեէտեան եւ Օրիորդ Օտեան, դրականութիւնն ու բանաստեղծութիւնն, ոյք անբոժան ըլլալ պարտէին յաւիտեան իրարմէ : Այսու չեմ ըսել ուզեր անշուշտ թէ Տիկին Մաքրիկ անմասն է բանաստեղծական աւիւնէ եւ Օրիորդ Եւփիմէ՝ դրական ոգիէ : — Կանայք, միշտ կանայք են, կը տեսնէք, որ կը վարեն՝ տեսանելի կամ անտես՝ զմարդկութիւն : Կանայք որոնց խօսքը գործք է, որոնց գործքն՝ հմայք : — Եւ ահա Հրանդ կ'երթայ հմայքն յաւելուլ այդ նորաչէն նօրօգուտ յարկին, յորում յետ այսօրիկ պիտի յաճի թեւածի հոգին անմահ՝ որոյ կոչուեցաւ վտարանուամբն(*) այն վահադաշնակ վեհալուր — վահրամ :

(*) Վտարանդիի անուն :

